

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Բ. ԴԱՍԱՐԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ՄԱՐԴՈՒՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ընթերցում

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ԲՆԱԳԻՐԸ

Եւ աւարտեցան երկինքն ու երկիրը, եւ անոնց բոլոր գարդերը: Այն օրը՝ երբ Տէր Աստուած երկիրն ու երկինքը ըրաւ, դաշտի որեւէ տունկ դեռ երկրի վրայ եղած չէր, եւ դաշտի որեւէ բոյս դեռ բուսած չէր, քանի որ Տէր Աստուած երկրի վրայ տակաւին անձրեւ տեղացուցած չէր, ու հողը մշակող մարդ չկար: Հապա երկրէն շոգի կը բարձրանար ու գետինին ամբողջ մակերեսը կը ջրէր: Տէր Աստուած գետինի հողէն ստեղծեց մարդը, անոր ունեցեալն կեանքի շունչ փչեց, եւ մարդը ապրող անձ եղաւ (Ծննդոց 2:1, 5-7):

Տէր Աստուած առաւ մարդը ու Եդեմի պարտէզին մէջ դրաւ, որպէսզի գայն մշակէ եւ պահէ: Տէր Աստուած մարդուն պատուիրեց. «Պարտէզին բոլոր ծառերէն համարձակ կեր, բայց բարիին ու չարին գիտութեան ծառէն մի՛ ուտեր. որովհետեւ այն օրը երբ անկէ ուտես, անշո՛ւշտ պիտի մեռնիս»: Տէր Աստուած ըսաւ. «Լաւ չէ որ Ադամ մինակ ըլլայ. անոր օգնական մը ընեմ՝ իրեն յարմար»: Եւ Տէր Աստուած դաշտին բոլոր գազաններն ու երկինքի բոլոր թռչունները հողէն ձեւակերպեց եւ Ադամի առջեւ բերաւ, որպէսզի տեսնէ թէ ինչպէս պիտի կոչէ գանոնք: Ինչպէս Ադամ կոչեց ամէն շնչաւոր կենդանի, ա՛յդ եղաւ անոր անունը: Ադամ բոլոր ընտանի անասունները, երկինքի թռչուններն ու դաշտին բոլոր գազանները կոչեց իրենց անուններով, բայց Ադամի օգնական մը չգտնուեցաւ՝ իրեն յարմար: Եւ Տէր Աստուած խորունկ քունի մը մէջ ձգեց Ադամը, եւ ան քնացաւ: Անոր կողոսկրներէն մէկը առաւ ու անոր տեղը միս լեցուց: Տէր Աստուած Ադամէն առած կողոսկրէն կին մը ստեղծեց, եւ գայն Ադամի բերաւ: Ադամ ըսաւ. «Ասիկա ոսկորէս՝ ոսկոր, ու միսէս՝ միս է. ասիկա կին պիտի կոչուի, քանի որ մարդէն առնուեցաւ» (Ծննդոց 2:15-23):



ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը: Յետոյ ստեղծեց մարդը՝ Ադամ ու Եւան եւ զանոնք դրաւ դրախտին մէջ: Մարդը երկրի ու երկինքի շնչաւոր կենդանիներէն եւ սողուններէն կը զանազանուի հետեւեալ տարբերութիւններով.

ա.- Մարդ անմահ հոգի ունի: Մահը հոգիին մարմինէն բաժանում է: Մարմինը կը վերածուի հողի, ինչ որ էր նախապէս ստեղծուիլը Աստուծոյ կողմէ: Իսկ հոգին անմահ կը մնայ ու յաւիտեան կ'ապրի: Կենդանիները իրենց մահէն ետք, ամբողջութեամբ կ'ոչնչանան:

բ.- Մարդ միտք, խելք, բանականութիւն ունի: Կը հասկնայ եւ կը դատէ ու կրնայ զանազանել լաւն ու զէշը, բարին ու չարը:

Մարդը կը խօսի, կրնայ իր մտածումները արտայայտել: Կ'ընդունի կամ կը մերժէ բաներ: Կը սորվի ու կը զարգանայ: Կրնայ գիւտեր ընել: Օրինակ, մարդ գտած է ելեքտրականութիւնը, ձայնասփիւռը, հեռատեսիլը կամ թէ այլ գիւտեր կատարած է ու դեռ կրնայ կատարել: Մարդ շինած է ինքնաշարժը, օդանաւը, արբանեակները, համացանցը եւլն.: Իսկ կենդանիները խելք, հասկացողութիւն, բանականութիւն չունին: Անոնք բնագոյով կը շարժին եւ նոյն ձեւով մնացած են հազարաւոր տարիներ: Աստուած այս բնութեամբ ստեղծած է զիրենք: Ո՛չ կը յառաջդիմեն եւ ո՛չ ալ կը զարգանան:

գ.- Մարդ ազատ կամք ունի: Աստուած մարդը ստեղծած է ազատ կամքով: Մարդ ընտրութիւններ կատարելու ազատութիւնը ունի: Միաժամանակ պատասխանատու եւ հաշուետու է իր կատարած լաւ

կամ վատ արարքներուն: Մարդը կրնայ կամովին ծոմ կամ պահք պահել, վատ արարքներէ եւ մոլորութիւններէ հրաժարիլ: Բարի վարքով եւ կրօնական սկզբունքներու համաձայն առաքինի կեանք ապրիլ: Աշխատիլ կամ չաշխատիլ, ուսանիլ կամ անուս, տգէտ մնալ: Իսկ կենդանիները միայն իրենց բնագոյով կ'ապրին: Ընտրելու կարողութիւն չունին: Անոնք իրենց արարքներու հետեւանքներուն պատասխանատուութեան գիտակցութիւնը չունին:

Որպէս մարդ արարածներ, պէտք է Աստուծոյ փառք տանք, որ մեզի տուած է անմահ հոգի, աշխատելու եւ մտածելու կարողութիւն եւ շնորհած է ազատ կամք:

Յարցումներուն պատասխանէ՛:

- 1.— Աստուած մարդը ստեղծելէ առաջ, աշխարհի վրայ ինչե՞ր ստեղծեց:
- 2.— Աստուած ի՞նչ բանէ ստեղծեց Ադամի մարմինը:
- 3.— Ո՞վ մարդուն տուաւ անմահ հոգի:
- 4.— Առաջին կինը Աստուած ինչպէ՞ս ստեղծեց:
- 5.— Մարդու հոգին կը մեռնի՞: Ինչո՞ւ:
- 6.— Անասունի հոգին կ'ոչնչանա՞յ:
- 7.— Ինչպէ՞ս գիտես որ մարդը մտածող միտք ունի:
- 8.— Թուէ՛ մարդուն կատարած կարգ մը գիւտերը:
- 9.— Կենդանիները մտածող միտք ունի՞ն: Ինչո՞ւ:
- 10.— Մարդը կրնա՞յ կամովին անօթի մնալ:
- 11.— Կենդանիները կրնա՞ն կամովին անօթի մնալ:
- 12.— Ինչո՞ւ փառք պէտք է տանք Աստուծոյ:

ՄԱՐԴՈՒՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Ընթերցում

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԲՆԱԳԻՐԸ

Տէր Աստուած մարդուն պատ-
ւիրեց. «Դրախտի բոլոր ծառերու
պտուղներէն կրնաս ուտել, բայց
բարին ու չարին գիտութեան ծառէն
մի՛ ուտեր. որովհետեւ այն օրը երբ
անկէ ուտես, պիտի մեռնիս»:



Սատանան օձի կերպարանքով
մօտեցաւ Եւային ու ըսաւ. «Ինչո՞ւ
Աստուած ըսաւ թէ դրախտին մէջ
գտնուող ծառերուն պտուղներէն
պիտի չուտէք»: Կինը օձին ըսաւ.

«Դրախտի ծառերուն բոլոր պտուղէն կրնանք ուտել: Բայց դրախտին
կեղրոնը գտնուած ծառին պտուղէն, Աստուած ըսաւ. “Անկէ մի՛ ուտէք
եւ անոր մի՛ դպչիք, որպէսզի չմեռնիք”»: Օձը կնոջ ըսաւ. «Ո՛չ թէ պիտի
մեռնիք, այլ այն օրը որ անկէ ուտէք, ձեր աչքերը պիտի բացուին եւ
աստուածներու պիտի նմանիք՝ ճանչնալով բարին եւ չարը»:

Կինը՝ տեսաւ թէ ծառին պտուղները լաւ էին ուտելու համար,
հաճելի տեսք ունէին եւ գեղեցիկ էին, առաւ անոնցմէ հատ մը, կերաւ
եւ իրեն հետ գտնուող ամուսինին (Ադամին) ալ տուաւ, եւ կերան: Ու
բացուեցան երկուքին աչքերը եւ գիտցան թէ մերկ էին: Ուստի թղթերի
տերեւներ կարեցին եւ իրենց հագուստներ շինեցին: Երեկոյեան այդ
պահուն, դրախտին մէջ լսեցին Աստուծոյ քայուածքին ձայնը: Ադամ եւ
իր կինը պահուրտեցան դրախտի ծառերուն մէջ: Տէր Աստուած Ադամը

կանչեց եւ անոր ըսաւ. «Ո՞ր ես»: Ադամ ըսաւ. «Պարտէզին մէջ քու ձայնդ լսեցի ու վախցայ, որովհետեւ մերկ էի, եւ պահուրտեցայ»: Աստուած ըսաւ. «Ո՞վ իմացուց քեզի թէ մերկ ես. արդեօք կերած ար այն ծառէն, որուն մասին քեզի պատուիրած էի որ անկէ չուտես»: Ադամ ըսաւ. «Այն կինը՝ որ տուիր ինձի հետ ըլլալու, ա՛ն ինձի տուաւ ծառէն, ու ես կերայ»: Տէր Աստուած կնոջ ըսաւ. «Այդ ի՞նչ ըրիր»: Կինը ըսաւ. «Օ՛ճը գիտ հրապուրելով խաբեց, ու ես կերայ»: Տէր Աստուած օճին ըսաւ. «Ասիկա ընելուդ համար՝ բոլոր անասուններէն ու երկրի բոլոր գազաններէն անիծեա՛լ ըլլաս»: Իսկ կնոջ ըսաւ. «Ցաւով գաւակներ պիտի ծնիս, տառապալից կեանք պիտի ունենաս»: Ադամին ալ ըսաւ. «Որովհետեւ դուն կնոջդ խօսքը մտիկ ըրիր, ու հակառակ պատուէրիս կերար այն ծառէն՝ որմէ ուտել քեզի արգիլեցի, թող անիծուի երկիրը քու պատճառովդ: Փուշ ու տատասկ բուսցնէ երկիրը, եւ դաշտին բոյսը ուտես: Ճակտի քրտինքով պիտի ուտես հացդ, մինչեւ հողին վերադառնալդ՝ ուրկէ առնուեցար. որովհետեւ հող էիր, հող պիտի դառնաս»:

Ապա Տէր Աստուած Եղեմի պարտէզէն վտարեց Ադամը, աշխատելու երկրի վրայ (Ծննդոց 2: 16, 3:1-23):



ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

1.- ՄԿՁԲՆԱԿԱՆ ՄԵՂՔԻՆ ՊԱՏԻՃՆԵՐԸ

Սկզբնական կամ Աղամական մեղքը գործուեցաւ դրախտին մէջ: Աղամական մեղքին պատճառաւ բոլոր մարդիկ մեղաւոր դարձան եւ մահուան իշխանութեան տակ ինկան: Մէկ մարդու անհնազանդութեամբ, մահը տիրեց բոլոր մարդոց վրայ: Եթէ սկզբնական մեղքը գործուած չլլար, աշխարհի մէջ մահ, հիւանդութիւն, տառապանք, չարչարանք, դժբախտութիւն ու արկածներ գոյութիւն պիտի չունենային:

Հետեւաբար մեղքի ու անհնազանդութեան պատճառաւ մարդիկ կորսնցուցին Աստուծոյ վստահութիւնը, շնորհքներն ու սէրը: Երբ ծնինք, սկզբնական մեղքով կը ծնինք, որովհետեւ որպէս մարդ հակամէտ ենք մեղք գործելու:

2.— ՍՈՒՐԲ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԼՈՒԱՅ, ԿԸ ՄԱՔՐԷ ՄԿՁԲՆԱԿԱՆ ՄԵՂՔԸ

Սկզբնական կամ Աղամական մեղքէ, սուրբ Մկրտութեան խորհուրդով կրնանք սրբուիլ, մաքրուիլ եւ մեզմէ հեռացնել յաւիտենական մահուան դատապարտութիւնը: Յիսուս միայն կրնայ մեզ Աղամական մեղքէ սրբել, մաքրել եւ վերստին Աստուծոյ որդեգրել: Յիսուսի անունով մկրտուածներ կ'ըլլան լոյսի որդիներ:

3.— ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԻՆ ՎՐԱՅ ԹԱՓԱԾ ԱՐԻՒՆԸ ԿԸ ՓՐԿԷ ՄԵՁ

Աստուած մարդուն հոգին յաւիտենական տանջանքէ փրկելու համար անոր հողեղէն մարմինը մահուան դատապարտեց: Աստուած

Թէեւ պատժեց մարդը իր անհնազանդութեան եւ մեղքին պատճառաւ, սակայն իր ձեռակերտը եղող մարդը սիրեց ու դրախտէն արտաքսելէն ետք, բնաւ չմոռցաւ: Աւետարանը կ'ըսէ. «Աստուած այնքան շատ սիրեց մարդ արարածը որ անոր փրկութեան համար իր Միածին Որդին Յիսուս Քրիստոսը աշխարհ դրկեց: Ան ծնաւ Ս. Կոյս Մարիամէն եւ ջախջախեց օձին/սատանային գլուխը: Յիսուս խաչին վրայ իր սուրբ արիւնը թափելով, յաւիտենական մահուան դատապարտութիւնը ջնջեց: Ուստի ով որ Յիսուս Քրիստոսի հաւատայ ու մկրտուի, կը սրբուի Ադամէն ժառանգած սկզբնական մեղքէն ու կ'արժանանայ երկինքի արքայութեան»:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մեր պարտականութիւնն է հնազանդիլ Աստուծոյ եւ կատարել Անոր պատուիրանները:

Մեղքը մեծագոյն չարիքն է, որ մարդիկը փորձանքներու կը մատնէ: Մեղքէն հեռացունը Աստուծոյ հաճոյք կը պատճառէ եւ մեզի շնորհքներու կ'արժանացնէ: Եթէ որպէս մարդ սխալինք ու մեղանչենք, պէտք է խոստովանինք ու Աստուծմէ թողութիւն խնդրենք: Աղօթելով կրնանք յաղթել մեղքին եւ Աստուծոյ սիրոյն արժանանալ:




Հարցումներուն պատասխանէ՛:


- 1.– Աստուած ո՞ր դրաւ Ադամն ու Եւան զանոնք ստեղծելէ ետք:
- 2.– Աստուած ինչո՞ւ չարտօնեց ուտել արգիլուած պտուղէն:
- 3.– Ո՞վ դրդեց Եւան խնձորը ուտելով մեղք գործելու:
- 4.– Սատանան օձի կերպարանքով ի՞նչ ըսելով խաբեց:
- 5.– Ադամն ու Եւան օձին հաւատալով ի՞նչ ըրին:
- 6.– Ադամ եւ Եւա ինչպէ՞ս անդրադարձան իրենց մեղքին:
- 7.– Անչնալով ի՞նչ ըրին:
- 8.– Աստուած ինչպէ՞ս պատժեց Եւան:
- 9.– Աստուած ինչպէ՞ս պատժեց Ադամը:
- 10.– Ադամի եւ Եւայի գործած սկզբնական մեղքով, մարդիկ ինչի՞ ենթակայ եղան:
- 11.– Եթէ սկզբնական մեղքը գործուած չըլլար, աշխարհի վրայ հիւանդութիւն եւ մահ գոյութիւն պիտի ունենայի՞ն:
- 12.– Ինչպէ՞ս կը սրբուինք եւ կը մաքրուինք սկզբնական մեղքէն:
- 13.– Մկրտուելով ինչի՞ կ'արժանանանք:
- 14.– Ի՞նչ է մեր պարտականութիւնը:
- 15.– Ինչո՞ւ մեղքը չարիք է:
- 16.– Ինչպէ՞ս կարելի է մեղքէ հեռանալ եւ Աստուծոյ սիրոյն արժանանալ:



Աղամի մեղքը մեզի մահ բերաւ



Քրիստոս մարդկութեան փրկութիւն
բերաւ



ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Բաղդատուքիւն Ադամի եւ Յիսուսի միջեւ

Ամբողջացնել նախադասութիւնները, աւելցնելով հետեւեալ բառերը. *Փրկութեան, հնազանդութեամբ, խաչին, երկնքի:*

ԱԴԱՄ

ՔՐԻՍՏՈՍ

• Անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ, արգիլեալ պտուղէն ուտելով:

• Հնազանդեցաւ Աստուծոյ մահանալով —————վրայ:

• Իր անհնազանդութեամբ մեզի մահ բերաւ:


• Մեզի կեանք տուաւ իր —————:

• Մեր առջեւ փակեց երկնքի դռները:

• Մեր առջեւ բացաւ —————:

• Ադամ աշխարհի կործանումին պատճառ հանդիսացաւ:

• Յիսուս աշխարհի ————— պատճառ հանդիսացաւ:



© 2009 Free Gift Ադամ եւ Եւա կ'արտաքսուին Դրախտէն

ՍՈՂՈՄ ԳՈՄՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

(Ծննդոց 18:20-33, 19:28)



Աբրահամ Նահապետին օրով երկու քաղաքներ կային Սոդոմ եւ Գոմոր անուներով: Անոնց բնակիչները անհնազանդ էին Աստուծոյ, եւ շատ չար ու մեղաւոր կեանք կ'ապրէին: Աստուած որոշեց այդ քաղաքները կործանել, եւ իր որոշումը յայտնեց աստուածապաշտ Աբրահամին:

Աբրահամ ուզեց բարեխօսել այդ քաղաքներու համար եւ ըսաւ Աստուծոյ.

- Կրնայ ըլլալ որ այդ մեղաւոր քաղաքներուն մէջ յիսուն արդար մարդիկ ըլլան, ինչո՞ւ արդարները պատժուին մեղաւորներու հետ:

- Եթէ Սոդոմի մէջ յիսուն արդար մարդիկ գտնուին, անոնց համար ամբողջ քաղաքը պիտի խնայեմ, - ըսաւ Աստուած:

Աբրահամ նորէն հարցուց.

- Եթէ հոն քառասունհինգ արդար գտնուի, դարձեալ պիտի կործանե՞ս:

- Եթէ հոն քառասունհինգ արդար գտնեմ, չեմ կործաներ, - ըսաւ Աստուած:

Աբրահամ հարցուց Աստուծոյ.

- Իսկ եթէ արդարներուն թիւը ըլլայ երեսուն, կամ քսան, կամ՝ տասը, դարձեա՞լ պիտի կործանես ամբողջ քաղաքը:

Աստուած յայտնեց Աբրահամին թէ պատրաստ էր Սոդոմ եւ Գոմոր քաղաքները խնայելու եթէ տասը արդարներ գտնուէին հոն. սակայն Սոդոմի մէջ Աբրահամի եղբորորդի Ղովտէն ու անոր ընտանիքէն գատ ուրիշ արդար մարդ մը չէր գտնուէր: Իսկ Գոմոր քաղաքի բոլոր բնակիչները իրենց գործած մեղքերուն պատճառաւ, չկրցան խուսափիլ Աստուծոյ գայրոյթէն: Հետեւաբար Աստուած որոշեց երկինքէն կրակ եւ ծծումբ թափելով, բնական աղէտով պատժել Սոդոմ եւ Գոմոր քաղաքները:

Բայց Աստուած խնայելու համար Աբրահամի եղբորորդի Ղովտը, անոր մօտ դրկեց երկու հրեշտակներ, որպէսզի թելադրէին, անմիջապէս քաղաքէն դուրս ելլելու:

- Աստուած որոշած է երկինքէն կրակ եւ ծծումբ թափելով պատժել Սոդոմ եւ Գոմոր քաղաքներուն մեղաւոր բնակիչները: Անձդ ու ընտանիքդ ազատելու համար փախի՛ր մեղաւոր այս քաղաքէն ու



Ետեւդ մի՛ նայիր, - ըսին հրեշտակները:

Ղովտ հնազանդեցաւ հրեշտակներուն, եւ առնելով իր կինն ու երկու աղջիկները խոյս տուաւ Սողոմէն:

Աստուած երկինքէն ծծումբ եւ կրակ տեղացուց Սողոմի ու Գոմորի բնակիչներուն վրայ եւ փճացուց ամէն ինչ:

Ղովտին կինը հակառակ հրեշտակին տուած պատուէրին, հետաքրքրութեան եւ քաղաքը վերջին անգամ տեսնելու փափաքով, երբ ետեւ դարձաւ իր բնակած Սողոմ քաղաքը տեսնելու համար, ան իսկոյն աղի արձան դարձաւ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Աստուած բարեգուօք եւ ողորմած է, գիտէ համբերել բայց նաեւ կը պատժէ չարութիւն գործող մարդիկը:

Աստուած կ'ողորմի եւ կը խնայէ արդարներուն ու զանոնք կ'ազատէ վտանգներէն:

Մարդ արարածին համար ամենակարեւոր արժէքը իր հոգին է եւ ոչ թէ ստացուածքը: Նիւթին եւ աշխարհին գերի ըլլալը կ'աղքատացնեն մեր հոգին ու մեղքի կ'առաջնորդեն: Իմաստուն մարդիկ կը փախչին ու հեռու կը մնան մեղքի բոյն դարձած միջավայրերէ եւ վատ ընկերակցութիւններէն:

Աստուածավախ մարդիկ, Աստուծոյ կը հնազանդին եւ աշխարհի մեղաւոր ձայներու ականջ տալով ետեւ չեն նայիր, ո՛չ ալ չար մարդոց օրինակին կը հետեւին:

Իսկ անոնք որ Աստուծոյ պատուերին հակառակ շարժելով ետին կը նային՝ այսինքն չեն կրնար երկրաւոր արժէքներէն եւ հաճոյքներէն ձերբազատուիլ, կէս ճամբան մնալով կը պատժուին Ղովտի կնոջ պէս:

Հարցումներուն պատասխանէ՛:

1.– Աստուած ինչո՞ւ համար որոշեց կործանել Սողոմ Գոմոր քաղաքները:

2. – Աստուած որո՞նք յայտնեց Սողոմ Գոմոր քաղաքները կործանելու որոշումը:

3.– Մինչեւ քանի՞ արդար մարդոց սիրոյն Աստուած պատրաստ էր քաղաքը չկորսնցնելու:

4.– Ո՞վ կը բնակէր մեղաւոր Սողոմի մէջ որպէս արդար:

5.– Աստուած խնայելու համար Աբրահամի եղբորորդի Ղովտը, ի՞նչ զրկեց անոր մօտ:

6.– Երկու հրեշտաները ի՞նչ թելադրեցին Ղովտի:

7.– Հրեշտակները ազատելու համար Ղովտը ի՞նչ ըսին:

8.– Ղովտ հնազանդելով հրեշտակներուն ի՞նչ ըրաւ:

9.– Աստուած ինչպէ՞ս պատժեց Սողոմ եւ Գոմոր մեղաւոր քաղաքներու բնակիչները:

10.– Ղովտին կինը ինչո՞ւ համար պատժուեցաւ եւ աղի արծան դարձաւ:

11.– Նիւթին, աշխարհին ու մեղքին յանձնուողը ինչի՞ կ'արժանանայ:

12.– Մարդուն համար ամենէն կարելոր արժէքը ի՞նչ է:



ԵՍԱԻ ՈՒ ՅԱԿՈՒ

(Ծննդոց 25:27-34, 27:)

Աբրահամի եւ Ռեբեկայի որդին Իսահակ, ունէր երկու որդի: Անդրանիկին անուան էր Եսաւ, իսկ կրտսերին՝ Յակոբ: Եսաւ մազոտ էր եւ կը գբաղէր որսորդութեամբ: Յաճախ իր որսերէն խորտիկներ կը պատրաստէր ու հօրը կը բերէր:



Եսաւ իր հօր անդրանիկ գաւակը ըլլալով, իրաւունք ունէր անոր յաջորդելու եւ իրենց գերդաստանին ղեկը ձեռք առնելու: Սակայն ան կարեւորութիւն չէր տար անդրանկութեան պաշտօնին, ոչ ալ կը փափաքէր Աբրահամի եւ իր հօրը Իսահակի սկսած հաւատքի ուղիղ ճամբայէն քալել ու գործադրել Աստուծոյ ծրագիրները: Իր ժամանակը կ'անցընէր որսորդութեամբ եւ հաճելի ժամանցներով: Եւ հակառակ իր հօրը եւ մօրը պատուէրին, ամուսնացաւ քանանացի օտար եւ կռապաշտ կնոջ հետ:

Իսկ Յակոբ, բնաւորութեամբ հանդարտ էր եւ աւելի արժանաւորութիւն ունէր իր հօր յաջորդը ըլլալու: Խելացի ու հեռատես էր եւ

կ'ուզէր քալել իր հօրը հաւատքի ճամբայէն:

Ռեբեկան Յակոբը Եսաւէն աւելի կը սիրէր, եւ կը փափաքէր որ Յակոբ Եսաւէն առնէր անդրանկութեան պաշտօնը եւ անդրանիկ զաւակին իրաւունք համարուող հայրական օրհնութիւնը, քանի որ Եսաւ իր ընթացքով արժանի չէր այդ օրհնութեան:

Այդ հին օրերուն սովորութիւն էր որ մէկու մը անդրանիկ որդին ժառանգէր իր հօր իշխանութիւնն ու հարստութիւնը: Միւս որդիները նուէրներ միայն կը ստանային: Մեծ որդին իր հօրը յաջորդելով պարտաւոր էր իրենց նահապետական ընտանիքին հաւատքը, աւանդութիւններն ու բարքերը փոխանցելու իր զաւակներուն:

Յակոբ իր եղբօր թոյլ ընթացքն ու անդրանկութեան պաշտօնին հանդէպ անոր անտարբերութիւնը տեսնելով, յարմար առիթի մը սպասեց անոր ձեռքէն անդրանկութեան իրաւունքը խլելու համար: Այդ առիթը ներկայացաւ իրեն:

Օր մը երբ Յակոբ իրեն համար կերակուր շիկաթան (ոսպապուր) կ'եփէր, Եսաւ դաշտէն եկաւ. ան շատ յոգնած ու անօթի ըլլալուն, Յակոբէն խնդրեց որ այդ կերակուրէն իրեն ալ տայ: Յակոբ հաճեցաւ տալ, պայմանաւ որ Եսաւ իր անդրանկութեան իրաւունքը իրեն տայ: Եսաւ իր անդրանկութեան իրաւունքը ոչինչ համարելով «*առ քեզի թող ըլլայ*» ըսաւ, ու երդումով ալ իր հրաժարումը հաստատեց. ապա նստաւ, կերաւ ու խմեց եւ կշտանալով ելաւ գնաց:

Եսաւ իր այս ընթացքով անարգեց իր անդրանկութեան արժէքը: Ան իր անդրանկութիւնը աման մը ապուրի փոխարէն ծախելով, զրկուեցաւ անդրանկութեան ժառանգութեան իրաւունքներէն:

Յակոբ ոչ միայն Եսա-
ւէն խլեց անդրանեութեան
իրաւունքը, այլեւ՝ իր հօր
առաջին օրհնութիւնը:

Իսահակ երբ շատ ծերա-
ցաւ, մարմնով տկարացաւ
ու աչքերն ալ գրեթէ չէին
տեսներ, օր մը ան կանչեց
Եսաւը եւ անկէ խնդրեց որսի
երթալ եւ որսացուած միսով
իր սիրած խորտիկներէն




Illustration by Nestor G. Stigapov M.

(համադամ եւ ախորժաբեր ուտելիք) պատրաստէ, որպէսզի ուտէ եւ
օրհնէ զինք: Անոնց խօսակցութիւնը վարագոյրի ետին կանգնած
Ռեբեկան կը լսէ, ու անմիջապէս կը կանչէ Յակոբը, անոր կը թելադրէ
երկու նորածին ուլիկներ մորթել եւ ճաշ պատրաստել: Յակոբ իր մօրը
օգնութեամբ խորտիկներ կը պատրաստէ եւ անոնց մորթերով ալ կը
ծածկէ իր ձեռքերն ու մամնին մերկ մնացած մասերը: Ապա Յակոբ կը
հագնի Եսաւի հագուստները եւ պատրաստուած կերակուրը կը տանի
Իսահակի: Իսահակ կը շօշափէ Յակոբի ձեռքերը, կը հոտոտայ անոր
հագուստները ու երբ կը հաստատէ թէ ան Եսաւն է, կ'ուտէ Յակոբին
պատրաստած կերակուրը, եւ իր անդրանիկ օրհնութիւնը կու տայ
Յակոբին, զոր խոստացած էր տալ Եսաւի:

Այսպէս Իսահակ չի ճանչնար Յակոբը, քանի որ անոր ձեռքերը
Եսաւի ձեռքերուն պէս մազոտ էին:

Հագիւ թէ Յակոբ իր հօրը օրհնութիւնը առած սենեակէն դուրս կու գայ, կը տեսնէ Եսաւը որսէն վերադարձած: Եսաւ ինքն ալ որսացուած միսով խորտիկներ պատրաստելով հօրը կը բերէ: Հայրը զարմացած կը հարցնէ. «Դուն ո՞վ ես»:

- *Ես եմ, քու անդրանիկ որդիդ, կը պատասխանէ Եսաւ:*

Իսահակ զարմացած եւ անակնկալի եկած կ'ըսէ.

- *Քիչ առաջ ինձի որս բերողը ո՞վ էր, որ ես անոր պատրաստած խորտիկներէն կերայ ու անդրանիկ զաւակի յատուկ օրհնութիւնս տուի:*

Եսաւ իր հօրմէն այս խօսքերը լսելով, բարկութեամբ լեցուած բարձրաձայն լացաւ:

Իսահակ Եսաւին ալ օրհնեց, սակայն ոչ որպէս անդրանիկ զաւակի տրուելիք օրհնութիւնը տուաւ:

Այս դէպքէն վերջ, Եսաւ թշնամութեամբ լեցուած՝ սկսաւ ատել Յակոբը ու մտադրեց զայն սպաննել: Իսահակ եւ Ռեբեկա երբ տեղեկացան Եսաւի մտադրութեան, որոշեցին Յակոբը Միջագետք՝ իր մօրեղբօր Լաբանին քով դրկել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Եսաւին հաճոյասէր կեանքը եւ իր անդրանկութեան պաշտօնին հանդէպ ունեցած անտարբերութիւնն ու անպատասխանատու ընթացքը, պատճառ դարձան որ Յակոբին անցնի անդրանկութեան պատիւն ու իրաւունքը: Նոյն սխալը կը գործեն նաեւ այն մարդիկ, որոնք ժամանակաւոր հաճոյքի եւ շահի փոխարէն

կը զոհեն իրենց նկարագիրը, պատիւը եւ կը զրկուին Աստուծոյ պարգեւելիք օրհնութիւններէն:

Յակոբ հայրական օրհնութիւնը ստանալու համար սուտ խօսեցաւ ու խաբեց իր հայրը: Յակոբ երբ տեսաւ որ Եսաւ կ'ատէ զինք, չարին հակառակ չկենալու համար փախաւ:

Բարի նպատակներու եւ պաշտօններու հասնելու համար զարտուղի միջոցներ գործածելն ալ դատապարտելի է Աստուծոյ առջեւ:

Չարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Իսահակ քանի՞ զաւակ ունեցաւ: Տուր անունները:
2. – Եսաւ արտաքինով ինչո՞վ կը յատկանշուէր, եւ իր ժամանակը ինչպէ՞ս կ'անցընէր:
- 3.– Յակոբ ինչպիսի՞ բնաւորութիւն եւ նկարագիր ունէր:
- 4.– Անդրանիկ զաւակը ի՞նչ կը ստանար իր հօրմէն եւ անոր մահէն ետք ի՞նչ էր իր պարտականութիւնը:
- 5.– Եսաւ կարեւորութիւն եւ արժէք կու տա՞ր իր անդրանկութեան:
- 6.– Եսաւ ինչպէ՞ս ծախեց իր անդրանկութեան իրաւունքը:
- 7.– Ծերանալէն ետք Իսահակին աչքերը ի՞նչ եղան:
- 8.– Իսահակ Եսաւին օրհնութիւն տալէ առաջ ի՞նչ առաջարկեց անոր:
- 9.– Իսահակի եւ Եսաւի միջեւ եղած խօսակցութիւնը ո՞վ լսեց եւ անմիջապէս ի՞նչ առաջարկեց:
- 10.– Յակոբ ի՞նչ ձեւով կը խաբէ իր հայրը:

11.– Եսաւ որսէն վերադարձին կրցա՞ւ անդրանկութեան օրհնութիւնը առնել:

12.– Եսաւ ինչո՞ւ թշնամութեամբ լեցուեցաւ իր եղբօր Յակոբի դէմ:

13.– Յակոբ ինչո՞ւ համար Միշագետք փախաւ:



Եսաւ կը գրադէր որսորդութեամբ:



Մօտս եկուր, օրհնութիւնս տամ քեզի


ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

(Ծննդոց 37: ,39: ,40: ,46: , 50:)

Յակոբ Միջագետք երթալով իր քեռիին՝ Լաբանի մօտ ապրեցաւ, եւ գրադեցաւ հովուութեամբ: Ամուսնացաւ Ռաքէլի հետ եւ ունեցաւ տասներկու որդիներ: Յակոբ քսան տարի ետք, ընտանիքով վերադարձաւ Քանան, եւ հաշտուեցաւ իր եղբօրը Եսաւի հետ: Կեանքի այս նոր հանգրուանին, Յակոբ այնուհետեւ ինքզինք Իսրայէլ կոչեց: Ան իր բոլոր զաւակները կը սիրէր, բայց Յովսէփի վրայ աւելի կը գուրգուրար եւ զինք ամենէն շատը կը սիրէր: Յակոբ-Իսրայէլ գոյնգոյն վերարկու մը շինել տուած էր Յովսէփի համար, որ երբ հագնէր, աւելի շքեղ կը դառնար: Յովսէփ ոչ միայն արտաքինով գեղեցիկ էր, այլեւ օժտուած էր բարեմասնութիւններով, նկարագրով պարկեշտ ու ազնիւ էր: Աստուած ալ օժտած էր Յովսէփը բարի շնորհքներով եւ երազներ մեկնելու կարողութեամբ: Ան երազներու միջոցով յայտնած էր Յովսէփի թէ օր մը ան անուանի պիտի ըլլայ եւ իր եղբայրները իրեն պիտի ծառայեն: Յովսէփի եղբայրները գիտնալով եւ տեսնելով այս բոլորը, անոր կը նախանձէին:



Օր մը Յովսէփի եղբայրները իրենց հօտերը արածելու համար հեռու տեղ գացած էին, ու երբ ուշացան, իսրայէլ կանչեց Յովսէփը եւ զայն դրկեց իր եղբայրներուն մօտ, որպէսզի անոնցմէ լուր մը բերէր:



Եղբայրները հեռուէն Յովսէփը տեսնելով, որոշեցին ջրհորի մէջ նետել եւ սպաննել: Սակայն Յուդայի թելադրութեամբ ջրհորէն հանեցին, եւ այնտեղէն անցնող ու Եգիպտոս ճամբորդող Իսմայելացի վաճառականներուն ծախեցին Յովսէփը քսան կտոր արծաթի: Իսկ անոր գունազարդ հագուստը մորթուած այծի արիւնին մէջ թաթխելով իրենց հօրը բերին եւ ըսին թէ Յովսէփ վայրի գազաններու կեր դարձած է:

Իսմայելացիները Յովսէփը տարին Եգիպտոս ու ծախեցին Պետափրէսին, որ Փարաւոնին դահճապետն էր: Յովսէփ հաւատարմօրէն ծառայեց դահճապետին եւ վերակացու նշանակուեցաւ անոր կալուածներուն: Սակայն անոր կինը աստուածավախ եւ առաքինի Յովսէփի դէմ չարախօսեց եւ բանտարկել տուաւ: Բանտին մէջ Յովսէփ երկու բանտարկեալներու երազները իմաստութեամբ մեկնելով՝ Փարաւոնին ուշադրութեան արժանացաւ եւ պալատ հրաւիրուեցաւ մեկնելու համար Փարաւոնին ալ տեսած երկու երազները:

Փարաւոնը լսեց Յովսէփին մեկնութիւնները, որով կը զգու-

չացուէր գալիք եօթը տարիներու սովի մասին: Փարաւոնը Յովսէփը նշանակեց Եգիպտոսի կառավարիչ եւ անոր վստահեցաւ երկիրը պարենաւորելու պարտականութիւնը:



Առատութեան եօթը տարիներուն յաջորդեց սովի տարիները: Ուրիշ երկիրներու ժողովուրդները սովի մատնուեցան: Սակայն շնորհիւ Յովսէփի իմաստուն կարգադրութեան, Եգիպտոսի ամբարները ցորենով եւ հացահատիկով պարենաւորուած ըլլալով, ոչ միայն բաւարարեցին Եգիպտոսի, այլեւ՝ դրացի երկիրներէ Եգիպտոս եկան ցորեն գնելու:

Յակոբ Քանանէն, ուր կ'ապրէին իր որդիները, բացի Բենիամինէ, Եգիպտոս դրկեց ցորեն գնելու համար: Յովսէփ ճանչցաւ իր եղբայրները, սակայն ինքզինք չյայտնեց անոնց: Չանոնք վախցնելու նպատակաւ հարցաքննութեան ենթարկեց: Տեղեկացաւ հօրը եւ Բենիամինի մասին: Սակայն որպէս լրտեսներ դատապարտեց ու երեք օր բանտարկեց զիրենք: Յովսէփ իր եղբայրները բանտէն դուրս հանեց, պայմանաւ որ յաջորդ անգամ իրենց հետ Բենիամինն ալ բերեն եւ փաստեն իրենց խօսքերուն ճշմարտութիւնը:

Յովսէփ մի քանի անգամներ այսպէս փորձելով, ու Բենիամինի ցորենի պարկին մէջ պահուած ոսկիէ գաւաթ գողնալու ամբաստա-

նույնամբ բանտարկելով իր եղբայրները, հասկցաւ որ անոնք զղջացած էին իրենց վատ արարքին համար եւ այնքան փոխուած, որ պատրաստ էին իրենց անձերը զոհաբերելու, ազատելու համար Բենիամինը, որպէսզի յաւելեալ վիշտ չպատճառէին իրենց ծերացած հօր:



Յովսէփ ի վերջոյ չկրցաւ գսպել իր արցունքները եւ ինքզինք եղբայրներուն յայտնելով փաթթուեցաւ անոնց վզին, համբուրեց ու բարձրաձայն ըսաւ.

- Ես Յովսէփին եմ, ձեր եղբայրը, մի՛ վախնաք, ինձի մօտեցէ՛ք: Դուք զիս ծախեցիք. սակայն Աստուած զիս հոս այս պաշտօնին առաջնորդեց: Հիմա գացէ՛ք, պատմեցէ՛ք հօրս թէ ես ողջ եմ:

Ապա Յովսէփ անոնց կառքեր տրամադրեց որպէսզի Քանան երթան, իրենց հայրն ու գերդաստանի 75 անդամները եւ ամբողջ ստացուածքները առնեն ու փոխադրուին Եգիպտոս:

Յակոբ երբ Եգիպտոս գաղթեց, Յովսէփ իր ընտանիքին յատկացուց Եգիպտոսի ամենալաւ հողերը: Անոնք Եգիպտոսի մէջ բազմացան ու կոչուեցան իսրայէլացիներ, իսկ Յակոբի տասներկու որդիներէն յառաջացան իսրայէլեան տասներկու ցեղերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յովսէփի պատմութիւնը մեզի կը զգուշացնէ չար նախանձէ: Չար նախանձը վատ արարքներու կը մղէ ու մեզ Աստուծոյ կը հեռացնէ:

Յովսէփի մաքուր նկարագիրն ու պարկեշտութիւնը զինք սիրելի դարձուցին Աստուծոյ: Իր ծանրաբարոյ վարքով, աղօթքով ու միշտ Աստուծոյ ապաւինելով՝ դիմագրաւեց ամէն չարիք ու փորձութիւն:

Յովսէփ իր պաշտօնը չծառայեցուց իր անձին շահ ապահովելու, ոչ ալ վրէժխնդիր եղաւ զինք ծախող եղբայրներուն հանդէպ, այլ վեհանձնութիւն ցուցաբերեց, ազատեց սովամահ ըլլալէ, սիրեց ու ներեց անոնց:

Յովսէփի իմաստութիւնը, բարութիւնը, պարկեշտութիւնը եւ վեհանձնութիւնը օրինակ պէտք է ըլլայ բոլոր պատանիներուն եւ երիտասարդներուն:

Չարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Յովսէփ որո՞ւ զաւակն էր եւ քանի՞ եղբայրներ ունէր:
- 2.– Յակոբ ինչո՞ւ համար շատ կը սիրէր Յովսէփը:
- 3.– Յակոբ Յովսէփին համար ի՞նչ շինել տուած էր:
- 4.– Աստուած ի՞նչ շնորհքով եւ կարողութեամբ օժտած էր Յովսէփը:
- 5.– Յովսէփի եղբայրները ինչո՞ւ կ'ատէին զինք:
- 6.– Օր մը Յակոբ Յովսէփը ո՞ւր դրկեց:
- 7.– Եղբայրները Յովսէփը տեսնելով ի՞նչ որոշեցին:
- 8.– Յուդայի թելադրութեամբ Յովսէփը որո՞ւ ծախեցին:

9.— Իսմայելացի վաճառականները ո՞ր տարին Յովսէփը եւ որո՞ւ ծախեցին:

10.— Յովսէփ երբ բանտի մէջ էր, Փարաւոնին ուշադրութեան արժանանալով ո՞ր հրաւիրուեցաւ: Ինչո՞ւ:

11.— Յովսէփ մեկնելով Փարաւոնին երազները ի՞նչ ըսաւ: Ի՞նչ բանէ կը զգուշացուէր:

12.— Երբ Յովսէփ կառավարիչ նշանակուեցաւ առատութեան եօթը տարիներուն ի՞նչ ըրաւ:

13.— Յովսէփի եղբայրները ինչո՞ւ Եգիպտոս գացին:


14.— Յովսէփ երբ ճանչցաւ իր եղբայրները, անոնց վախցնելու համար հարցաքննելէ ետք ի՞նչ ըրաւ:

15.— Յովսէփ ինչո՞ւ բանտարկեց իր եղբայրները:

16.— Յովսէփ ինչո՞ւ համոզուեցաւ որ իր եղբայրները զղջացած ու փոխուած էին:

17.— Յովսէփ ինքզինք եղբայրներուն յայտնելով ի՞նչ ըրաւ ու ի՞նչ ըսաւ:

18.— Յակոբ իր գերդաստանով Եգիպտոս գաղթելով ի՞նչ կոչուեցան:





Յովսէփը ջրհորէն հանեցին, եւ այնտեղէն անցնող ու Եգիպտոս ճամբորդող Իսմայելացի վաճառականներուն ծախեցին քսան կտոր արծաթի:

ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷ

(Ելից 1:-20:, 24:, 32:,34:, 35:, 37:,40:, Թուոց 13:, 14:,20:1-13, 22-29, 21:4-9, 27:12-23, Բ. Օրինաց 31:,32:44-52, 34:)

Իսրայելի որդիները Եգիպտոսի մէջ աճեցան ու բազմացան: Սակայն չորս հարիւր տարի ետք, երբ նոր Փարաւոն մը գահ բարձրացաւ, օտարերկրեայ իսրայէլացիներու հանդէպ վախով եւ ատելութեամբ լեցուած՝ թշնամացաւ, որովհետեւ անոնց թիւը բազմանալով հզօրացած էին: Ան կասկածեցաւ անոնց հաւատարմութեան վրայ: Եւ ենթադրելով որ պատերազմի մը պարագային իսրայէլացիները կրնային թշնամիին կողմը անցնիլ՝ ճնշումներու ենթարկեց եւ շինարարական ծանր աշխատանքներու պարտադրեց: Իսկ անոնց թուային աճը նուազեցնելու նպատակաւ, Փարաւոնը իր մարդոց հրամայեց որ իսրայէլացիներուն նորածին մանչ գաւակները գետը նետեն ու մեռցնեն:



Ղեւիի ցեղէն հրեայ ընտանիք մը, երեք ամիս իրենց նորածին մանչ գաւակը եգիպտացիներու աչքէն թաքցնելէ ետք, մայրը մատնուելէ վախցած, ստիպուեցաւ կուպրով ծեփուած կողովի մը մէջ դնել իր գաւակը եւ Նեղոսի գետեզերքին եղէգնոտ ջուրերուն մէջ ձգեց:

Փարաւոնին աղջիկը որ այդ կողմերը իր սպասուհիներուն հետ լողալու եւ գրօսելու ելած էր, հեռուէն նկատեց կողովը: Հրամայեց իր մօտ բերել կողովը, ու երբ տեսաւ կողովին մէջ լացող մանուկը, շատ սիրեց եւ որոշեց որդեգրել: Անոր անունը Մովսէս կոչեց, որ կը նշանակէ «Զուրէն գտնուած»: Մովսէսի քոյրը Մարիամ որ հեռուէն կը դիտէր, որպէս անծանօթ մօտեցաւ եւ Փարաւոնի աղջկան առաջարկեց խնամել մանուկը: Երբ իշխանուհին հաւանութիւնը առաւ, Մարիամ տարաւ Մովսէսը իրենց տունը: Մայրը շատ ուրախացաւ եւ եօթը տարի սնուցանեց ու դաստիարակեց Մովսէսը աստուածպաշտութեամբ: Եօթը տարի ետք, Մովսէս տարուեցաւ պալատ: Փարաւոնի պալատին մէջ Մովսէս ստացաւ եգիպտական բարձր ուսում, սակայն չմոռցաւ իր ազգը ու կը մտածէր թէ ինչ ձեւով կրնար օգտակար ըլլալ տառապող իր ազգակիցներուն: Օր մը Մովսէս երբ տեսաւ եգիպտացի մը որ անխնայ կը չարչարէր ու կը ծեծէր իսրայէլացի մը, չկրցաւ ինքզինք զսպել, եգիպտացիին վրայ խոյացաւ ու սպաննեց: Այս դէպքէն ետք, ան ստիպուած փախաւ Եգիպտոսէն: Քառասուն տարի օտարութեան մէջ ապրեցաւ, ամուսնացաւ եւ դարձաւ հովիւ:



Օր մը Մովսէս Քորեբ լերան վրայ իր հօտը արածած ատեն տեսաւ մորենի մը որ կ'այրէր, սակայն չէր հատներ: Հետաքրքրութեամբ երբ մօտեցաւ, լսեց Աստուծոյ ձայնը որ իրեն կը հրամայէր երթալ Եգիպտոս եւ իր



ազգը Եգիպտոսէն դուրս հանելով, ազատել գերութեան ծանր լուծէն: Մովսէս հնազանդեցաւ եւ իր կնոջ ու իր երկու որդիներով մեկնեցաւ Եգիպտոս: Հոն իր եղբօր Ահարոնի հետ ներկայացաւ Փարաւոնին, եւ պահանջեց որ ազատ արձակէ իսրայէլացիները: Փարաւոնը ընդդիմացաւ, մերժեց ու սպառնաց: Մովսէս եւ Ահարոն չյուսահատեցան, յարատեւ պահանջեցին եւ է-ին, Աստուծոյ անուկով հրաշքներ գործեցին ու տասը աղէտներով հարուածեցին եգիպտացիները: Ի վերջոյ Փարաւոն ստիպուեցաւ թոյլտուութիւն տալ Մովսէսի, որ Եգիպտոսէ դուրս բերէ իսրայէլացիները: Սակայն երբ իսրայէլացիք մօտեցան Կարմիր ծովուն, Փարաւոնը միտքը փոխեց: Ան հաւաքեց իր զօրքը եւ շարժեցաւ անոնց ետեւէն: Իսրայէլացիք Փարաւոնի զօրքը տեսնելով շատ վախցան: Մովսէս իր ձեռքի գաւազանը զարկաւ ծովու ջուրերուն եւ սաստիկ հով ելլելով ծովու ջուրերը բաժնուեցան եւ ճամբայ բացուելով անցան ծովուն մէջէն: Իսկ երբ Փարաւոնի զօրքը կառքերով անոնց ետեւէն ծովու ջուրերուն մէջէն սկսաւ յառաջանալ, Մովսէս իր գաւազանը նորէն զարկաւ ջուրերուն, եւ ջուրերը ծածկեցին ծովը, ու ամբողջ զօրքը խեղդամահ եղաւ:


Կարմիր ծովը անցնելէ ետք, իսրայէլացիք Սինայի անապատին մէջ Աստուծոյ ղրկած լորամարգիներով եւ Մանանայով կերակրուեցան: Իսկ Աստուծոյ հրամանով, Մովսէս Քորեբ լերան ժայռերէն ջուր բխեցնելով իրենց ծարաւը յագեցուցին:

Եգիպտոսէն դուրս Սինայի անապատին մէջ երեք ամիս թափառելէ ետք, Մովսէս կարգ կանոն հաստատելու եւ կառավարելու համար իր ժողովուրդը Սինայի լեռ բարձրացաւ եւ Աստուծոյ դիմեց: Ան քառասուն օր աղօթեց, ճգնեցաւ եւ Աստուծմէ երկու տախտակներու վրայ

գրուած ստացաւ Տասը Օրէնքներ կամ պատուիրաններ: Առաջին տախտակին պատուիրանները կը վերաբերէին Աստուծոյ հանդէպ մարդոց պարտականութիւններուն, իսկ երկրորդ տախտակին պատուիրանները կը վերաբերէին մարդոց, թէ ինչպէ՛ս պիտի վարուէին իրարու հետ:

Տասը պատուիրանները հետեւեալներն են.

- 1.- **Ես եմ քու Տէր Աստուածդ, ուրիշ աստուածներ մի՛ ունենար:**
- 2.- **Կուռքեր մի՛ շիներ քեզի համար, եւ զանոնք մի՛ պաշտեր:**
- 3.- **Աստուծոյ անունով սուտ երդում մի՛ ըներ (Աստուծոյ անունը գուր տեղ մի՛ արտասաներ):**
- 4.- **Կիրակի օրը սուրբ պահէ:**
- 5.- **Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի երկար կեանք ունենաս:**
- 6.- **Մի՛ սպաններ:**
- 7.- **Մի՛ շնար: (Անառակ, փողոցային կեանք մի՛ ունենար):**
- 8.- **Մի՛ գողնար:**
- 9.- **Սուտ վկայութիւն մի՛ ըներ:**
- 10.- **Ընկերոջդ կամ դրացիիդ ունեցածին մի՛ ցանկար:**



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մովսէս մարգարէն օրինակելի տիպար մըն է աստուած-պաշտութեան եւ ազգասիրութեան: Ան իր ազգին օգտակար ըլլալու համար, լքեց Փարաւոնի պալատն ու իշխանական փառքը եւ որպէս հովիւ, օտարութեան մէջ ապրեցաւ:

Աստուած կը լսէ, կ'ողորմի եւ կ'ազատագրէ անարդար կերպով տառապող եւ ճնշուած ժողովուրդներու պաղատագին ձայնը:

Անգութ Փարաւոնն ու իր ժողովուրդը պատժուեցան: Նոյն-պէս ալ ով որ Աստուծոյ կամքին հակառակ չարութիւն կը գործէ եւ իր նմանները կը չարչարէ, կամ Աստուծոյ բարի ծրագիրներուն դէմ կը կենայ՝ անպատիժ չի' մնար:

Ինչպէս Աստուած խօսեցաւ Մովսէսի, ներկայիս ալ Աստուած մեզի կը խօսի Աստուածաշունչի միջոցաւ: Մեր պարտականութիւնն է կարդալ, սորվիլ Աստուծոյ խօսքը եւ գործադրել անոր պատուիրանները:

Աստուծոյ բոլոր պատուիրանները սուրբ են, որովհետեւ իր սուրբ կամքը կը յայտնեն մեզի, եւ մեզ սրբացունի կ'առաջ-նորդեն:

«Եթէ կ'ուզես մտնել յաւիտենական կեանքէն ներս, պատուիրանները պահէ» (Մատթէոս 19:17):

Չարցումներուն պատասխանէ՛:

- 1.— Ինչո՞ւ նոր Փարաւոնը հրեաներու դէմ թշնամացաւ:
- 2.— Փարաւոնը ի՞նչ միջոցներու դիմեց հրեաները ճնշելու, տկարացնելու:
- 3.— Մովսէսի մայրը ինչո՞ւ իր նորածինը կողովի մը մէջ դնելով գետին եզերքը ջուրին վրայ ձգեց:

4.– Փարաւոնին աղջիկը ջուրին մէջ կողովը տեսնելով ի՞նչ ըրաւ: Ինչո՞ւ մանկան անունը Մովսէս կոչեց:

5.– Մովսէս Փարաւոնի պալատին մէջ ինչպիսի՞ ուսում ստացաւ: Ան մոռցա՞ւ իր Աստուածն ու իր ազգը:

6.– Մովսէս ինչո՞ւ համար փախաւ Եգիպտոսէ: Ի՞նչ արիեստով զբաղեցաւ: Ինչո՞ւ վերադարձաւ Եգիպտոս:

7.– Մովսէս որո՞ւ ընկերակցութեամբ ներկայացաւ Փարաւոնին եւ ի՞նչ պահանջեց:

8.– Ինչո՞ւ Փարաւոն ստիպուեցաւ արտօնել որ իսրայէլացիներ դուրս ելլեն Եգիպտոսէ:

9.– Իսրայէլացիներ ինչպէ՞ս անցան Կարմիր ծովը:

10.– Իսրայէլացիները հալածող Փարաւոնի զօրքը կրցա՞ւ հասնիլ իսրայէլացիներուն: Զօրքը իրենց կառքերով ի՞նչ եղան:

11.– Իսրայէլացիք անապատին մէջ ինչո՞վ կերակրուեցան:

12.– Իր ժողովուրդը կառավարելու համար Մովսէս ո՞ր լեռը բարձրացաւ: Մովսէս քանի՞ օր ճգնեցաւ եւ աղօթելով Աստուծմէ ի՞նչ ստացաւ:

13.– Առաջին տախտակի չորս պատուիրանները որո՞ւ կը վերաբերէին: Երկրորդ տախտակին պատուիրանները որո՞ւ:





Փարաւոնին աղջիկը հրամայեց իր մօտ բերել կողովը, ու երբ տեսաւ կողովին մէջ լացող մանուկը, շատ սիրեց զայն եւ որոշեց որդեգրել: Անոր անունը Մովսէս կոչեց, որ կը նշանակէ «Զուրէն գտնուած»:

Օր մը Մովսէս Քորեբ լեռան վրայ իր հօտը արածած ատեն տեսաւ մորենի մը որ կ'այրէր, սակայն չէր հատներ:



Երբ մօտեցաւ, լսեց է-ին, Աստուծոյ ձայնը որ իրեն կը հրամայէր երթալ Եգիպտոս եւ իր ազգը Եգիպտոսէն դուրս հանելով, ազատել գերութեան ծանր լուծէն:




Մովսէս իր ձեռքի գաւազանը զարկաւ ծովու ջուրերուն եւ սաստիկ հով ելլելով ծովու ջուրերը բաժնուեցան եւ ճամբայ բացուելով անցան ծովուն մէջէն:

ԴԱԻԻԹ ԹԱԳԱԻՈՐ

(Ա. Թագաւորաց 16:, 17:1-58, 18:1-16, 19:1-17,20:, 21:1-9, 22:6-23,24:, 26:, 31: Բ. Թագաւորաց 2:1-11, 4:,5:,6:1-19, 11:, 12:1-14, 13:23-36, 15:,18:)

Մովսէս իսրայէլացի իր ազգակիցները, Աստուծոյ օգնութեամբ, եգիպտական ծանր լուծէն ազատագրելէ ետք, զանոնք քառասուն տարի առաջնորդեց Սինայի անապատին մէջ: Անոր մահէն ետք իսրայէլացիք բնակեցան Քանանի երկրին մէջ եւ կառավարուեցան Դատաւորներով: Դատաւորներու պաշտօնն էր ժողովուրդը աստուածապաշտութեամբ կառավարել եւ զգուշացնել հեթանոս վատ սովորութիւններէ:



Սաւուղ թագաւոր Կօծուի

Քաղաքական եւ կրօնական պաշտօն ունեցող Դատաւորներ՝ շուրջ երեք հարիւր տարի երկիրը կառավարեցին: Իսրայէլացիք իրենց դրացի ազգերու նման իրենք ալ ուզեցին թագաւոր ունենալ, եւ դատաւոր Սամուէլէ թագաւոր խնդրեցին: Սամուէլ Աստուծոյ հրամանով Սաւուղը Իսրայէլի թագաւոր օծեց:




Դաւիթ, պատանի հովիւը

Սկիզբը Սաւուղ Աստուծոյ կամքին եւ օրէնքներուն համաձայն ինչպէս նաեւ Սամուէլի իմաստուն խրատներով երկիրը կառավարեց, եւ իսրայէլի թշնամիներուն դէմ մեծ յաղթանակներ տարաւ: Սակայն յետագային Սաւուղ ինքնագլուխ սկսաւ գործել. անտեսեց Սամուէլի պատուէրները եւ

Աստուծոյ օրէնքներէն շեղեցաւ: Այս պատ-
ճառաւ Աստուծոյ Հոգին հեռացաւ Սաւուղէն
եւ ընտրեց Բեթղեհեմացի Յեսսէի որդի
Դաւիթը, որ հովիւ էր:

Այդ ժամանակ իսրայէլացիք մշտական
պատերազմի մէջ էին դրացի Ամմոնացիներու,
Ամաղեկացիներու եւ Փղշտացիներու
դէմ:



Դաւիթ կը զգեսնէ Գողիաթը


Պատերազմի մը նախօրէին, Փղշտացիներ առաջարկեցին իսրայէլա-
ցիներուն, որ փոխանակ երկու բանակներ իրարու դէմ պատերազմին,
մէյ մէկ ներկայացուցիչներ ընտրեն, եւ անոնք կռուին իրարու հետ:
Փղշտացիներու կողմէ մենամարտի ներկայացաւ սուր, նիզակ եւ
վահանով լաւապէս գինուած Գողիաթ անունով հսկայ մը: Սաւուղ
արքան երբ տեսաւ Գողիաթը ու լսեց անոր նախատական խօսքերը
Աստուծոյ ու իր բանակին ուղղուած՝ անելի մատնուեցաւ որովհետեւ,
ամբողջ Իսրայէլի մէջ չկար հսկայ Գողիաթի հօօրութեան հաւասարող
մէկը:

Այդ օրերուն պատանի Դաւիթ, Սաւուղի բանակին մէջ ծառայող
իր երեք եղբայրներէն լուր մը առնելու համար, երբ մօտեցաւ բանակին
եւ լսեց Գողիաթի արհամարհական խօսքերն ու սպառնալիքները, որո-
շեց անոր դէմ մենամարտիլ: Դաւիթի միակ գէնքը հովիւի իր պարսա-
տիկն էր: Ան գետինէն հինգ խճաքարեր առնելով մօտեցաւ Գողիաթին,
եւ իր պարսատիկէն քար արձակելով՝ Գողիաթի ճակատէն զարկաւ:
Գողիաթ անակնկալի զալով մեծ աղմուկով գետին տապալեցաւ:
Դաւիթ շուտով վազեց վիրաւոր Գողիաթի վրայ եւ անոր մէջքէն սուրը

հանելով գլուխը կտրեց: Փղշտացիները իրենց ախոյեանին սպաննուիլը տեսնելով սարսափեցան ու փախան:

Այս յաղթանակէն վերջ, Սաւուղ Դաւիթը բանակի հրամանատար կարգեց: Իսկ ժողովուրդը ուրախութեան աղաղակներով, պարերով եւ երգերով դիմաւորեց բացազանչելով. «Սաւուղ հազարներու յաղթեց, իսկ Դաւիթ՝ տասնեակ հազարներու»: Գովասանական այս խօսքերը Սաւուղի նախանձը գրգռեցին: Զայրացած եւ ատելութեամբ լեցուած, Սաւուղ աշխատեցաւ եւ չար միջոցներու դիմեց, Դաւիթի օրէ օր աճող ժողովրդականութեան վերջ տալու համար: Դաւիթը սպաննուած տեսնելու նպատակաւ, գայն թշնամիներու դէմ պատերազմի վտանգաւոր սահմանները ուղարկեց:

Նախանձն ու վնաս հասցնելու Սաւուղի չար ընթացքը, հեռացուցին զինք Աստուծմէ եւ իր ժողովուրդէն: Սաւուղ յաճախ կ'անհանգստանար եւ չար ոգիէ հալածուելով կը կորսնցնէր իր գիտակցութիւնը: Դաւիթ չար ոգին հեռացնելու եւ հանդարտեցնելու համար Սաւուղի հոգեկան տագնապները, քնարը կ'առնէր եւ սաղմոսներ կը նրազէր: Սակայն ժամանակի ընթացքին, Սաւուղի նախանձն ու ատելութիւնը այնքան սաստկացան Դաւիթի հանդէպ, որ Դաւիթի քնար նուազած պահուն, Սաւուղ նոյնիսկ փորձեց նիզակով գայն սպաննել:



Դաւիթ եւ Սաւուղ



Սաւուղ կը փորձէ սպաննել Դաւիթը

Սաւուղի որդին Յովնաթանը, որ Դաւիթի մտերիմ ընկեր էր, քանի մը անգամ փորձեց համոզել իր հայրը որ ետ կենայ Դաւիթը սպաննելու չար

մտադրութենէն: Սակայն անօգուտ:

Դաւիթի Սաւուղը սպաննելու առիթներ ալ ներկայացան, սակայն Դաւիթ մերժեց թագաւորական օծում ունեցող Սաւուղը սպաննել:

Դաւիթ գիտնալով իր կեանքին դէմ սպառնացող վտանգը, Յովնաթանի թելադրանքով հեռացաւ եւ փախստականի կեանք ապրեցաւ մինչեւ Սաւուղի մահը:



Պատերազմի մը ընթացքին էր երբ Իսրայէլացիք, Փղշտացիներէ մեծ պարտութիւն կրեցին: Այդ կռիւի ժամանակ, Սաւուղ վիրաւորուելով՝ անձնասպան եղաւ: Սպաննուեցան նաեւ Յովնաթան իր երկու եղբայրներով:

Սաւուղի մահէն վերջ Դաւիթ թագաւոր օծուեցաւ: Դաւիթի առաջին գործը եղաւ ազատագրել Երուսաղէմը: Հոն իր պալատը կառուցեց եւ մեծ հանդիսութեամբ Տապանակ Ուխտին (աղօթքի խորան) հոն բերաւ, եւ Երուսաղէմը հռչակեց իր թագաւորութեան մայրաքաղաքը:

Դաւիթ գանազան առիթներով, եւ մարդկային կեանքի տարբեր վիճակներու վերաբերեալ Աստուծոյ ուղղուած գեղեցիկ երգեր եւ սաղմոսներ յօրինած է:

Աստուծոյ Հոգիով ներշնչուած իր սաղմոսներուն մէջ Դաւիթ նաեւ մարգարէացած է Քրիստոսի մարդեղութիւնը, աստուածութիւնը, չարչարանքները, թաղումը եւ յարութիւնը:

Դաւիթ թագաւորեց քառասուն տարի: Դաւիթ արքային օրով երկիրը խաղաղեցաւ, բարգաւաճեցաւ եւ ընդարձակուեցաւ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ազգ մը միշտ պէտք ունի կարող, նուիրեալ եւ Աստուծոյ ապաւինող իմաստուն առաջնորդներու: Աստուած իրեն սիրող եւ հաւատացող ազգերուն կու տայ դարու պահանջքին համեմատ առաջնորդներ:

Աստուած նախ նահապետներով, դատաւորներով ու ապա թագաւորներու միջոցաւ կառավարեց երբայեցի ժողովուրդը: Այս ցոյց կու տայ աստիճանական զարգացում, ժողովուրդի մը քաղաքական կեանքին:

Սամուէլ Աստուծոյ հրամանով թագաւոր օծեց Սաւուղը: Երբ Աստուծոյ Հոգին Սաւուղի վրան էր, ան մեծամեծ գործեր ըրաւ Տիրոջ փառքին եւ իր ազգին համար: Սակայն երբ մեղանչեց ու չզղջաց, Աստուծմէ լքուեցաւ, ամէն ինչ կորսնցուց եւ ողբալի վախճան մը ունեցաւ:

Դաւիթ բազուկի բիրտ ուժի ապաւինելէ աւելի՝ վստահեցաւ Աստուծոյ եւ յաղթեց Գողիաթին: Բոլոր անոնք Աստուծոյ կը վստահին եւ անոր զօրութիւնը խնդրելով կը պայքարին չարին դէմ՝ կը յաղթեն:

Նախանձը մարդուս սիրտը ատելութեամբ կը լեցնէ ու կը մղէ չարութիւն գործելու: Նենգութիւնը, ատելութիւնը, չարամտութիւնը եւ ոխակալութիւնը մեզ Աստուծմէ կը հեռացնեն ու սատանայի ճիրաններուն կը մատնեն:

Դաւիթ վեհանձն եւ ներող եղաւ Սաւուղի հանդէպ: Եթէ վրէժ-խնդիր ըլլար ու Սաւուղը սպաննէր, Աստուծոյ առջեւ մեծ մեղք գործած պիտի ըլլար, որովհետեւ ան Աստուծոյ օծեալն էր ու թագաւորական իշխանութիւն ունէր:

Քրիստոսի եկեղեցւոյ քահանաները, եպիսկոպոսներն ու կաթողիկոսը Տիրոջ օծեալներն են: Ամէն անոնք որոնք Տիրոջ օծեալները կը բամբասեն, կ'անարգեն, չարիք կը հասցնեն կամ ձեռք կը բարձրացնեն՝ մեծ մեղք կը գործեն:

Աստուած օրհնեց Դաւիթը անոր հաւատարմութեան, հնազանդութեան եւ արդարութեան համար:

Հարցումներուն պատասխանէ՛:

1.— Մովսէս անապատին մէջ քանի՞ տարի առաջնորդեց իր ժողովուրդը:

2.— Քանանի երկրին մէջ իսրայէլի առաջնորդները ի՞նչ կոչուեցան: Ի՞նչ էր Դատաւորներու պաշտօնը:

3.— Ո՞վ եղաւ Իսրայէլի առաջին թագաւորը:

4.— Ինչո՞ւ Աստուծոյ Հոգին հեռացաւ Սաւուղէն:

5.— Պատերազմի մը նախօրէին, Փղշտացիներ ի՞նչ առաջարկեցին Իսրայէլացիներուն:

6.— Ո՞վ էր Գողիաթ: Դաւիթ երբ լսեց Գողիաթի սպառնական խօսքերը ի՞նչ որոշեց:

7.— Ի՞նչ էր Դաւիթի զէնքը:

8.— Դաւիթ ինչպէ՞ս սպաննեց Գողիաթը:

9.— Սաւուղ ինչո՞ւ ատելութեամբ լեցուեցաւ Դաւիթի դէմ:

10.— Սաւուղ Դաւիթը սպաննուած տեսնելու համար ո՞ր ուղարկեց:

11.— Չար ոգին Սաւուղէն հեռացնելու համար Դաւիթ ի՞նչ կ'ըներ:

12.— Սաւուղ Դաւիթի քնար նուագած ատեն ի՞նչ ըրաւ:

13.— Դաւիթ ինչո՞ւ համար չէր ուզեր Սաւուղը մեռցնել:

14.— Դաւիթ ե՞րբ թագաւոր օծուեցաւ:

15.— Ի՞նչ եղաւ Դաւիթի առաջին գործը:

16.— Դաւիթ ո՞ր բերել տուաւ Աստուծոյ Ուխտին Տապանակը:

17.— Ի՞նչ կը կոչուին Դաւիթ թագաւորի գրած բանաստեղծութիւնները:

18.— Իր գրած սաղմոսներուն մէջ Դաւիթ որո՞ւ մասին մարգարէացած է:

19.— Դաւիթ քանի՞ տարի թագաւորեց:

20.— Դաւիթի օրով երկիրը ի՞նչ եղաւ:



Դաւիթ թագաւոր կ'օծուի



«Տէրը իմ լոյսս ու փրկութիւնս է, ես որմէ՞
պիտի վախնամ: Տէրը իմ կեանքիս ապաւէնն
է, ես որմէ՞ պիտի դողամ» Սաղմոս 27:1



*Դուն սուրով, նիգակով կու գաս կռուելու,
բայց ես գորութեանց Տիրոջ անունով
կու գամ:*



*«Մարդ արարածը մէկու մը
արտաքին երեւոյթին կը նայի
ու կը դատէ, բայց Աստուած
մարդուն սրտին կը նայի»
Ա. Թագաւորաց 16:7*

ՅԻՍՈՒՍ ԱՇԽԱՐՀԻ ՓՐԿԻԶԸ

(Մատթէոս 2:19-23, 28:16-20, Մարկոս 6:3, Ղուկաս 2:8-17, 39-52)

Հայր Աստուած, Ադամ Եւայով սկիզբ առած մարդ արարածի մեղքերը սրբելու եւ հոգին յաւիտենական կորուստէ փրկելու համար՝ իր Միածին Որդին աշխարհ դրկեց: Հին Կտակարանի մարգարէական գիրքերու եւ Աստուծոյ խոստումին համաձայն, Աստուածորդին ծնալ սուրբ կոյս Մարիամէն եւ կոչուեցաւ Յիսուս, որ կը նշանակէ փրկիչ:



Յիսուս մինչեւ երեսուն տարեկան մեծցաւ եւ ապրեցաւ Գալիլիայի Նազարէթ քաղաքին մէջ եւ ճանչցուեցաւ որպէս ատաղձագործ Յովսէփի որդի:

Յիսուս իր մանկութիւնը եւ պատանեկութիւնը անցուց բարեպաշտ ծնողաց խնամքին ներքեւ, եւ հասակ առաւ իմաստութեամբ եւ շնորհքով: Յիսուս գրել կարդալ գիտէր եւ լաւ սորված էր Հին Ուխտը: Տիրապետած էր եբրայերէնին եւ արամերէնին: Եբրայերէնը հրէից սրբազան գրականութեան դասական լեզուն էր. իսկ արամերէնը, այդ օրերուն Պաղեստինի մէջ գործածուած ժողովրդային լեզուն էր:

Յիսուսի հանրային պաշտօնավարութեան շրջանին, Մարիամի

անունը կը յիշուի յաճախ, բայց Յովսէփ չի յիշուիր: Ասիկա ցոյց կու տայ թէ Յովսէփ մեռած էր Յիսուսի երեսուն տարեկան ըլլալէն առաջ: անունը կը յիշուի յաճախ, բայց Յովսէփ չի յիշուիր: Ասիկա ցոյց կու տայ թէ Յովսէփ մեռած էր Յիսուսի երեսուն տարեկան ըլլալէն առաջ:



Յիսուս հիւսնութիւն ընելով թէ՛ իր եւ թէ՛ մօրը ապրուստը կը հոգար:

Յիսուս երկրի վրայ երեսուն երեք տարիներ ապրեցաւ: Անոնցմէ երեսունը անցուց Նազարէթ քաղաքին մէջ, իսկ վերջին երեք տարիներուն Յիսուս քարոզեց, սորվեցուց եւ հրաշքներ կատարեց:


Նազարէթ քաղաքին մէջ Յիսուսի անցուցած կեանքին գլխաւոր դէպքերը հետեւեալներն են. —

- ա.- Ծնունդը Բեթղեհէմի մէջ,
- բ.- Հովիւներու այցելութիւնը,
- գ.- Անուանակոչութիւնը,
- դ.- Քառասնօրեայ տաճարին ընծայուիլը,
- ե.- Մոգերուն այցելութիւնը,
- զ.- Եգիպտոս փախուստը,
- է.- Նազարէթ վերադարձը:

ՓՐԿԻԶՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՄՆ Է

Աստուծոյ Որդին մարդ եղաւ, կոչուեցաւ Յիսուս Քրիստոս,

այսինքն Աստուծոյ Օծեալը, Փրկիչը կամ Մեսիան, որպէսզի փրկէ մեզ մեղքէն եւ մեր հոգին ազատէ դժոխքի սատանային տիրապետութենէն:



Մարդացեալ Աստուծոյ Միածին Որդին եւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ էր: Աստուած էր իր երկնաւոր Հօր նման եւ մարդ եղաւ ճիշդ մեզի պէս:

Քրիստոս մեր առջեւ բացաւ երկինքի դռները եւ սորվեցուց ապրիլ աստուածահաճոյ, առաքինի կեանք մը:

Երբ երեսուն տարեկան եղաւ, Յիսուս եկաւ Յորդանան գետ, եւ Յովհաննէս Մկրտիչի կողմէ մկրտուեցաւ: Ապա քառասուն օրեր ծոմ պահելէ եւ սատանային յաղթելէ ետք, տասներկու աշակերտներ ընտրեց եւ սկսաւ իր առաքելութեան: Քրիստոս հրապարակային երեք տարիներու ընթացքին, յաճախ առականերով խօսեցաւ, քարոզեց եւ սորվեցուց աստուածային օրէնքներ: Բժշկեց, հրաշագործեց եւ ինքզինք որպէս Փրկիչ՝ աշխարհին յայտնեց:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հրապարակային երեք տարիներու ընթացքին Յիսուս հաստատեց նաեւ Եկեղեցին: Առաքեալները որոնք իր օգնականներն էին՝ Եկեղեցւոյ հովիւներ նշանակեց, որպէսզի երկրի վրայ շարունակեն իր սկսած գործն ու առաքելութիւնը: Յիսուսի հաւատացողներ, Երրորդութեան անունով մկրտուելով եղան Եկեղեցւոյ անդամներ: Յիսուս պատուիրեց

որ եկեղեցւոյ հովիւներն ու անդամները գիրար սիրեն, Աստուածաշունչի օրէնքներուն հնազանդին եւ աստուածահաճոյ կեանք ապրին:

ՅԻՍՈՒՍԻ ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԿԻՆՔ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ

Հակառակ Հին Ուխտի մարգարէական գիրքերու մէջ Քրիստոսի աշխարհ գալու եւ մարդիկը փրկելու Աստուծոյ խոստումին իրականացման, հրեայ կրօնական եւ քաղաքական պետեր, Յիսուսի դէմ ատելութեամբ լեցուեցան, որովհետեւ իր աստուածային ճշմարիտ ուսուցումները կը դատապարտէին իրենց չար մտածումներն ու գործերը: Այս պատճառով, ժողովուրդը Յիսուսի դէմ հանելով, ձերբակալեցին զինք ու խաչեցին: Սակայն երրորդ օրը, Յիսուս յարուլթիւն առաւ: Երկրի վրայ մնաց քառասուն օրեր, յաճախ երեւցաւ իր աշակերտներուն եւ քաջալերեց զիրենք իրենց հաւատքին մէջ: Ապա բաժնուեցաւ եւ երկինք համբառնալով Հօր Աստուծոյ աջ կողմը նստեցաւ: Ան խոստացաւ օր մը նոյն մարմնով կրկին աշխարհ գալ, դատելու ողջերն ու մեռածները: Ամէն անոնք որոնք իրենց հաւատքը պահած ու Աստուծոյ կամքին համաձայն ապրած են, պիտի վարձատրուին, իսկ չարուլթիւն գործողները պիտի պատժուին դժոխքի անշէջ կրակին մէջ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՄԲՈՂՋԱՑՆԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԵՏԵԻԱԼ ԲԱՌԵՐՈՎ

Որդին, մարդ, մարդիկը, ծառայութենէն

Աստուած սիրեց———. իր Միածին———Յիսուս Քրիստոս զրկեց անոնց. որպէսզի փրկէ զիրենք սատանային———: Աստուծոյ Որդին մարմին ստացաւ Սուրբ Կոյս Մարիամէն եւ մեզի պէս ———դարձաւ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յիսուս աշխարհ եկաւ մարդ արարածը իր մեղքերէն սրբելու եւ փրկելու համար:

Յիսուս իր ընտանեկան յարկէ ներս, կրօնական մթնոլորտի մէջ դաստիարակուեցաւ եւ հասակ առաւ: Ան կատարելապէս ծանօթ էր Սուրբ գիրքերուն: Յիսուսի գլխաւոր եւ միակ մտահոգութիւնը իր երկնաւոր Յօր իրեն վստահած փրկութեան գործը կատարելն էր:

Յիսուս տիպար օրինակ եղաւ բոլոր փոքրիկ մանուկներուն եւ պատանիներուն: Հնազանդեցաւ Աստուծոյ պատուէրներուն, օգնեց ծնողներուն. մեծցաւ աստուածային ու մարդկային շնորհքներով եւ իմաստութեամբ: Յիսուս իր հօր արհեստը սորվիլը եւ աշխատիլը ամօթ չհամարեց: Զբաղումը, արհեստն ու աշխատանքը սուրբ են, ծուլութիւնն ու անհոգութիւնը պախարակելի են, թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մարդոց առջեւ:

Յիսուս իր փոքրաթիւ աշակերտներով հիմնեց իր եկեղեցին: Երբ երկինք համբարձաւ, իր սկսած գործն ու երկրի վրայ փրկութեան առաքելութիւնը եւ Աւետարանի լոյսը շարունակեցին տարածել իր առաքեալները: Ան որ դաւանի Յիսուս Քրիստոսը Տէր եւ Փրկիչ ու մկրտուի՝ կը դառնայ Աստուծոյ որդեգիր եւ ժառանգորդ երկինքի արքայութեան:


Սուրբ եկեղեցին եւ անոր զաւակներուն պարտականութիւնն է կարդալ Աստուածաշունչը եւ հաւատարիմ մնալ Քրիստոսի պատուէրներուն, աղօթել եւ յոյսով սպասել Քրիստոսի երկրորդ Գալստեան:





Հարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Մարդ արարածի մեղքերը սրբելու եւ հոգին ազատելու համար Աստուած ո՞վ դրկեց աշխարհ:
- 2.– Յիսուս ո՞ր եւ ինչպէ՞ս անցուց իր մանկութիւնն ու պատանեկութիւնը: Ի՞նչ էր Յիսուսի զբաղումը:
- 3.– Յիսուս կարդալ գրել գիտէ՞ր: Ի՞նչ լեզուներով կը խօսէր:
- 4.– Յիսուս երկրի վրայ քանի՞ տարի ապրեցաւ:
- 5.– Թուէ՛ Նազարէթ անցուցած Յիսուսի կեանքին գլխաւոր դէպքերը:
- 6.– Ի՞նչ կը նշանակէ Քրիստոս:
- 7.– Յիսուս ե՞րբ, ո՞ր եւ որո՞ւ կողմէ մկրտուեցաւ:
- 8.– Թուէ՛ Քրիստոսի երեք տարիներու հրապարակային կեանքին գլխաւոր ուսուցումները:
- 9.– Յիսուս ինչո՞ւ հաստատեց եկեղեցին: Որո՞նք կրնան եկեղեցւոյ անդամ ըլլալ:
- 10.– Յիսուս ի՞նչ պատուիրեց եկեղեցւոյ հովիւներուն, եւ հաւատացեալ անդամներուն:
- 11.– Հրեայ քահանայապետներն ու իշխանները ինչո՞ւ համար թշնամացան Յիսուսի եւ զԱյն մատնեցին խաչի մահուան:
- 12.– Յիսուս ե՞րբ յարութիւն առաւ:
- 13.– Յիսուս յարութիւն առնելէ ետք քանի՞ օրեր երկրի վրայ մնաց:
- 14.– Յարուցեալ Յիսուս իր աշակերտներուն երեւելով ի՞նչ պատուիրեց անոնց:
- 15.– Յիսուս ե՞րբ երկինք համբարձաւ:
- 16.– Յիսուս երկինք համբարձնալով ի՞նչ խոստացաւ:
- 17.– Յիսուսի Երկրորդ Գալուստին ի՞նչ պիտի պատահի:

*Յիսուս կը գարգանար իմաստութեամբ
եւ կը մեծնար հասակով, Աստուածային
եւ մարդկային շնորհքներով:
(Ղուկաս 2:39-52)*



Յիսուս կը սիրէր բնութիւնը,
կենդանիներն ու երկինքի
թռչունները:



**«Նոյն մարմնով երկինք ելաւ եւ
նստեցաւ Հօր աջ կողմը: Նոյն
մարմնով պիտի գայ եւ Հօր փառքով,
դատելու համար ողջերն ու
մեռածները. Անոր թագաւորութիւնը
վերջ չունի»»: Հաւատամք**



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Հին սովորութեան մը համաձայն, երբ ծնողք մը իր առաջին զաւակը ունենար, Աստուծոյ օրհնութիւն, շնորհք եւ պահպանութիւն ստանալու համար քառասուն օրեր ետք, պէտք էր զայն տաճար տանէին եւ Աստուծոյ ներկայացնէին. իրենց ընծայած զաւակին համար շնորհակալութիւն յայտնէին, եւ այս առթիւ տաճարին նուէր տային:

Յովսէփ եւ Մարիամ ալ Յիսուսի ծնունդէն քառասուն օրեր ետք, առին Յիսուս մանուկը եւ տարին տաճար: Անոնք հարուստ չէին որ տաճարին գառնուկ մը նուիրէին, այդ պատճառով ալ Աստուծոյ ընծայեցին աղաւնիի երկու ձագեր միայն:

Տեառնընդառաջի տօնը Յիսուսի տաճար ընծայման տօնն է:

Սուրբ Ծնունդը Յունուար 6-ին ըլլալով, Տեառնընդառաջի տօնը կը կատարուի Փետրուար 14-ին, Յիսուսի ծնունդէն ճիշդ քառասուն օրեր յետոյ:


Տօնին նախորդող երեկոյեան, Փետրուար 13-ին, եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ երեկոյեան ժամերգութիւն եւ կ'երգուին տօնին նուիրուած շարականներ: Եկեղեցւոյ ատեանին մէջ խորանէն վառուած մոմեր կը դնեն: Ժողովուրդը ատեանի այդ մոմերէն իրենց մոմերը կը վառեն եւ *Քրիստոսի Լոյսը* տուն կը տանին: Իսկ այն ծնողները որոնք ուխտ ըրած են, իրենց զաւակները արարողութեան աւարտին կը յանձնեն քահանային, որ խորան Աստուծոյ ներկայութեան կը տանի զանոնք, եւ կ'աղօթ որ Աստուած ընդունի զիրենք, օրհնէ, պահէ ու պահպանէ:

Հայկական մեր աւանդութեան եւ սովորութեան համաձայն, եկեղեցական արարողութիւններէն ետք, եկեղեցւոյ բակին մէջ նախապէս պատրաստուած փայտերու թէզը, եկեղեցիէն բերուած մոմով կը վառեն:

Ընդհանրապես նոր ամուսնացած հարսեր եւ փեսաներ, եկեղեցիի ատեանէն կը վառեն իրենց մոմերը եւ դուրս գալով, կրակ կու տան խարոյկին: Ժողովուրդը եւ եկեղեցականներ վառուած մեծ կրակին շուրջ կ'երգեն, կը պարեն, խարոյկին վրայէն կը ցատկեն եւ մինչեւ ուշ ատեն ժողովրդային ուրախութիւն տեղի կ'ունենայ:

Ուրախութեան ընթացքին բարի մաղթանքներ կ'ըլլան: Յատկապէս կը պատուուին նոր ամուսնացած զոյգերը: Նոր ամուսնացած հարսերու եւ փեսաներու կը մաղթեն սեր, երջանկութիւն որպէսզի, շուտով բախտաւորուին եւ քրիստոնէայ առողջ հայ ընտանիք կազմեն:

Ջանազան բարեմաղթութիւններու կողքին, չի մոռցուիր Աստուծոյ առողջութիւն, գործերու յաջողութիւն, աշխարհին խաղաղութիւն եւ մարդոց երջանկութիւն խնդրել: Մասնաւոր մաղթանք կ'ըլլայ նաեւ, որ Աստուած օրհնէ՛, պաշտպանէ դաշտերն ու այգիները որպէսզի առատ բերք ունենան:



ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

(Մատթէոս 3: 1-17, 4:1-11)

Յիսուս Նազարէթ քաղաքին մէջ կ'ապրէր իր ծնողքին հետ: Յիսուս երեսուն տարիքը չբոլորած, հայրը Յովսէփ արդէն վախճանած էր, եւ ինք հօրը արհեստը՝ հիւսնութիւն ընելով կը հոգարտան կարիքները: Այդ օրերուն սովորութիւն էր, որ եթէ մէկը ուզէր ժողովուրդին կրօն ուսուցանել կամ վարդապետ ըլլալ, պէտք էր մինչեւ երեսուն տարեկան պատրաստուէր: Յիսուս ալ այդ օրէնքին համաձայն, մինչեւ երեսուն տարեկանը ծնողքին հետ ապրեցաւ, չյայտարարեց իր Փրկիչ ըլլալը, չուսուցանեց, ոչ ալ հրաշքներ կատարեց:



Սակայն երբ երեսուն տարեկան եղաւ, գնաց Յորդանան գետին եզերքը, ուր Յովհաննէս Մկրտիչ իր ազգականը, ապաշխարութիւն կը քարոզէր եւ կ'ըսէր, որ պատրաստ ըլլան ընդունելու Աստուծոյ ղրկած նոր թագաւորը եւ Փրկիչ Յիսուսը: Զղջան իրենց գործած մեղքերուն համար եւ մկրտուին:

Յիսուս բոլորին օրինակ ըլլալու համար երբ մօտեցաւ մկրտուելու,

Յովհաննէս Սուրբ Հոգիին ազդեցութեամբ հասկցաւ թէ Յիսուս Աստուծոյ միածին Որդին՝ Քրիստոս Փրկիչն է։ Սկիզբը չուզեց մկրտել զԱյն ու ըսաւ. *«Ինծի պէտք է որ քեզմէ մկրտուիմ»*։ Յիսուս պատասխանեց. *«Հիմա ձգէ որ մկրտուիմ, որովհետեւ այսպիսով կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամքը»*։ Յիսուս իր այս խօսքով ըսել կ'ուզէր, որ ո՛չ թէ մեղաւոր էր եւ կը մկրտուէր, այլ կ'ուզէր յարգել Հին Կտակարանի ծիսական բոլոր օրէնքները եւ օրինակ ըլլալ բոլորին, որ մկրտութիւնը անհրաժեշտութիւն է սրբուելու համար Ադամական, սկզբնական մեղքէ։

Յիսուս երբ մկրտուեցաւ եւ ջուրէն դուրս ելլելով կ'աղօթէր, երկինքը բացուեցաւ ու Աստուծոյ Հոգին աղաւնիի կերպարանքով իջաւ Անոր վրայ, եւ լսուեցաւ Աստուծոյ ձայնը որ կ'ըսէր. *«Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ»*, իմ հաւանութիւնս տուի, Անոր հնազանդեցէք։

ՅԻՍՈՒՍ ԿԸ ՓՈՐՁՈՒԻ ՍԱՏԱՆԱՅԷՆ

Յիսուս մկրտուելէ անմիջապէս ետք, Յուդայի անապատը առանձնացաւ եւ հոն քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմապահութեամբ, աղօթքով եւ խոկումով անցուց իր ժամանակը։

Երբ քառասուն օրերը վերջացան, Յիսուս անօթեցաւ եւ տկարացաւ։ Չար Սատանան տեսնելով որ կրնայ փորձել Յիսուսը, մօտեցաւ անոր եւ ըսաւ. *«Եթէ Աստուծոյ Որդին ես, ըսէ որ այս քարերը հաց դառնան եւ անօթութիւնդ անցնի»*։

Յիսուս հակառակ անոր որ շատ անօթի էր, գիտցաւ որ Սատանան գինք կը փորձէր, չուզեց քարերը հացի վերածել եւ ուտել։ Յիսուս պա-

տասխանեց Սատանային. *«Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ Աստուծոյ խօսքերով»:*

Սատանան իր այս առաջին փորձին մէջ պարտուեցաւ, բայց իր յոյսը չկտրեց: Ան նորէն մօտեցաւ Յիսուսի, եւ բարձր աշտարակի վրայ տանելով ըսաւ Յիսուսի.

«Եթէ Աստուծոյ Որդին ես, ինքզինքդ այս տեղէն վար նետէ, եւ հրեշտակներ պիտի գան եւ քեզ իրենց ձեռքերուն վրայ վերցնեն, որպէսզի ոտքդ քարի չզարնուի»:

Յիսուս մերժեց Սատանային առաջարկը եւ ըսաւ.

«Աստուծոյ օրէնքներուն մէջ գրուած է, որ պէտք չէ քու Տէր Աստուածդ փորձես»:

Սատանան հակառակ երկրորդ անգամ պարտուելուն, կրկին չյուսահատեցաւ: Նոր խորամանկութիւն մը փորձելով, Յիսուսը հանեց բարձր լեռան մը վրայ ու անկէ Յիսուսի ցոյց տուաւ աշխարհի բոլոր հարստութիւնները, թագաւորական կեանքի փառքերը եւ ըսաւ.

«Այս բոլորը քեզի կու տամ, եթէ խոնարհիս իմ առջեւ ու զիս պաշտես»:


Յիսուս պատասխանեց. *«Հեռացի՛ր ինձմէ՛ չար Սատանայ, որովհետեւ գրուած է Սուրբ Գիրքին մէջ, թէ միայն քու Տէր Աստուածդ պիտի պաշտես ու Անոր երկրպագես»:*

Սատանան ամչցած ու պարտուած, ձգեց ու հեռացաւ:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ա.- Յիսուսի Մկրտութիւնը: Յիսուս Յորդանան գետին մէջ Յովհաննէս Մկրտիչին ձեռքով մկրտուելով, սրբագործեց ջուրը եւ հաստատեց մկրտութեան խորհուրդը, որպէսզի Քրիստոսի հաւատացողներ մկրտուելով՝ սրբուէին Ադամական կամ սկզբնական այն մեղքէն, զոր մարդկային ամէն արարած իր ծնունդով ժառանգած է: Սակայն Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդին ղրկեց, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ ու մկրտուի, յաւիտենական կորուստէ փրկուի:



Հետեւաբար, Աստուծոյ արքայութիւնը ժառանգելու համար պայման է մկրտուիլը: Մկրտութիւնը կը կոչուի նաեւ **վերստին ծնունդ**: Մկրտուողը կը դառնայ Աստուծոյ որդեգիր ու եկեղեցւոյ անդամ:

Մեր եկեղեցիներու մէջ, Սուրբ Ծննդեան պատարագէն անմիջապէս ետք տեղի ունեցող ջրօրհնէքի արարողութիւնը, Քրիստոսի մկրտութեան յիշատակը կը խորհրդանշէ: Իսկ ջուրին մէջ դրուած մեծ խաչը՝ կը ներկայացնէ Փրկիչ Յիսուսը:

Բ.-Յիսուսի Փորձութիւնը: Յիսուս աղօթքով եւ ծոմապահութեամբ կրցաւ Սատանայի փորձութիւններուն դիմադրել եւ յաղթել: Առաջին փորձութեամբ, Յիսուս մեզի կը զգուշացնէ գերի չըլլալ մարմնական պահանջներու եւ ֆիզիքական կարիքներու միայն, այլ մեր կեանքը ապրիլ անոնցմէ վեր բարոյական եւ հոգեւոր արժէքներով, ինչպէս աստուածսիրութիւն, հաւատարմութիւն, ներողամտութիւն, աշխատասիրութիւն, բարութիւն, հնազանդութիւն, ընկերասիրութիւն, որոնք տարբեր տեսակի աննիւթական հոգեւոր հացեր են (Բ. Օրինաց 8:3):



Երկրորդ փորձութեամբ, երբ Սատանան Յիսուսի առաջարկեց բարձունքէն վար նետուիլ, վստահեցնելով որ անվնաս պիտի մնար, Յիսուս չենթարկուեցաւ Սատանային, եւ ցոյց տուաւ թէ ինք Աստուածորդի Քրիստոսն է: Որովհետեւ եթէ Յիսուս անխոհեմութեամբ ենթարկուէր՝ այդ փառամոլութեան եւ ցուցամոլութեան յանձնուիլ կը նշանակէր (Բ. Օրինաց 6:16):

Երրորդ փորձութեամբ, Յիսուս Աստուածաշունչէն մէջքերուն ընելով յիշեցուց, որ Աստուած երկնքի ու երկրի Տէրն ու ստեղծիչն է, եւ արարածներ պարտաւոր են միան զԻնք պաշտել:

Աշխարհի մէջ հարստութիւն, դիրք եւ փառք ունենալու համար, պէտք չէ Չարին ենթարկուիլ եւ Սատանան պաշտել: Յիսուս աշխարհ եկած էր ոչ թէ երկրաւոր ու ժամանակաւոր թագաւորութիւն մը հիմնելու կամ աշխարհին տիրելու, որովհետեւ այդ բոլորը արդէն իրեն կը պատկանէին: Յիսուս մեզի կ'ուսուցանէ, որ կեանքի ընթացքին, երբ մենք եւս զանազան տեսակի փորձութիւններու հանդիպինք, իրեն նման կարողանանք ըսել. *«Ետիս զնա՛ սատանայ»* (Բ. Օրինաց 6:13):

Հարցումներուն պատասխանէ՛:

1.— Մինչեւ երեսուն տարեկան Յիսուս Նազարէթի մէջ ինչո՞վ զբաղեցաւ:

2.— Ինչո՞ւ Յիսուս մինչեւ երեսուն տարեկան չյայտարարեց իր Փրկիչ ըլլալը, եւ ոչ ալ հրաշքներ կատարեց:

3.— Ո՞վ էր Յովհաննէս Մկրտիչ, ի՞նչ կը քարոզէր եւ ի՞նչ կ'ընէր:

4.— Ինչո՞ւ Յովհաննէս ուզեց որ ինք մկրտուի Յիսուսի կողմէ:

5.— Ինչո՞ւ Յիսուս մկրտուեցաւ: Յիսուս մկրտուելով ո՞ր խորհուրդը հաստատեց:

6.– Յիսուս քանի՞ տարեկան էր երբ մկրտուեցաւ:

7.– Յիսուս երբ մկրտուեցաւ եւ ջուրէն դուրս ելաւ ի՞նչ պատահեցաւ: Հայր Աստուած երկինքէն ի՞նչ ըսաւ:

8.– Քրիստոսի հաւատացողներ մկրտուելով ի՞նչ կը դառնան: Մկրտութիւնը նաեւ ի՞նչ կը կոչուի:

9.– Ջրօրհնէքի արարողութիւնը ինչի՞ խորհրդանշ է: Իսկ ջուրին մէջ դրուած խաչը ի՞նչ կը ներկայացնէ:

10.– Յիսուս իր մկրտութենէն ետք ո՞ր գնաց եւ ի՞նչ ըրաւ:

11.– Քանի՞ օր ետք Սատանան մօտեցաւ Յիսուսի եւ ինչո՞ւ:

12.– Սատանան առաջին փորձով ի՞նչ առաջարկեց Յիսուսի:

13.– Ի՞նչ կը նշանակէ «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ Աստուծոյ խօսքերով» Յիսուսի տուած պատասխանը:


14.– Սատանան Յիսուսը խաբելու իր երկրորդ փորձով ի՞նչ ըսաւ: Ի՞նչ պատասխանեց Յիսուս:

15.– Սատանան երրորդ անգամ ի՞նչ առաջարկեց Յիսուսի:


16.– Բացատրէ՛ Յիսուսի երրորդ փորձութեան իմաստը: Յիսուս յաղթելով Սատանային մեզի ի՞նչ կ'ուսուցանէ:



Յովհաննէս Մկրտիչ ապաշխարութիւն կը քարոզէր եւ կ'ըսէր, որ պատրաստ ըլլան ընդունելու Փրկիչ Յիսուսը: Զղջան իրենց գործած մեղքերուն համար եւ մկրտուին:



*«Ասիկա է իմ սիրելի որդիս, որուն ես
հաճեցայ»*





Յիսուս մկրտուելէ անմիջապէս ետք, Յուդայի անապատը առանձնացաւ եւ հոն քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմապահութեամբ, աղօթքով եւ խոկումով անցուց իր ժամանակը:



*«Հեռացիր ինձմէ չար Սատանայ, որովհետեւ գրուած է Սուրբ Գիրքին մէջ, թէ միայն
քու Տէր Աստուածդ պիտի պաշտես ու Անոր երկրպագես»:
Սատանան ամչցած ու պարտուած, ձգեց ու հեռացաւ:*

ՅԻՍՈՒՍԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՇՔԸ

(Յովհաննէս 1:29-51, Մատթէոս 4:18-22, Մարկոս 2:13-14, Ղուկաս 10:1)

(Յովհաննէս 2:1-11)

Յիսուս Սատանային յաղթելով, փաստեց թէ ինք Աստուածորդի Փրկիչն էր: Ան աշխարհ եկած էր մարդիկը Չարէն ու Սատանայի տիրապետութենէն ազատելու եւ Աստուծոյ խոստացած արքայութեան արժանացնելու բոլոր անոնք, որոնք



հաւատարմով կը մկրտուին Ամենասուրբ Երրորդութեան (Հայր, Որդի եւ Ս. Հոգի) անունով, եւ կ'ապրին աստուածահաճոյ կեանք մը:

Յիսուս, երկրաւոր իր առաքելութեան ընթացքին ընտրեց իրեն անմիջական տասներկու օգնականներ, որոնք առաքեալներ կոչուեցան: Անոնց պաշտօնն էր ընկերակցիլ եւ օգնել Յիսուսի: Իսկ Յիսուսի երկինք համբառնալէն ետք, առաքեալները աշխարհի չորս անկիւնները գացին Աւետարանը (Աստուծոյ Խօսքը) քարոզելու եւ Քրիստոսի առաքելութիւնը երկրի վրայ շարունակելու:

Յիսուս երեք տարիներու իր գործունէութեան ընթացքին, տասներկու առաքեալներու կողքին, ունեցաւ նաեւ եօթանասուն երկու

աշակերտներ եւ հինգ հարիւր հետեւորդ համակիրներ, որոնք իր անմիջական շրջանակը կը կազմէին:



Յիսուս պարզ մարգարէ մը չէր Յովհաննէս Մկրտիչի, կամ անկէ առաջ այլ մարգարէներուն նման, որ մարդիկը միայն մխիթարէր, զգուշացնէր, ապաշխարութեան հրաւիրէր, յանդիմանէր կամ փրկուելու համար ժողովուրդին պարտադրէր գործադրել Մովսիսական Օրէնքները:

Յիսուս Աստուած էր, իր երկնաւոր Հօր նման: Յիսուս շատ յաճախ ոչ միայն յայտարարեց իր Աստուած ըլլալը, այլ փաստեց իր աստուածութիւնը բազմաթիւ հրաշքներ կատարելով:

Յիսուսի կատարած բազմաթիւ հրաշքներէն առաջինը, տեղի ունեցաւ Գալիլիայի Կանա քաղաքին մէջ, ուր հարսանիքի մը ընթացքին, որուն հրաւիրուած էին Յիսուս, իր մայրը ինչպէս նաեւ աշակերտները:

Հարսանիքի ուրախութեան պահուն երբ գինին սպառեցաւ, վերջացաւ, Յիսուս հրամայեց քարէ վեց կարասները ջուրով լեցնել, ապա ըսաւ. «Հիմա կարասներուն մէջէն հանեցէք ու համտեսեցէք»: Երբ հանեցին ջուրը, արդէն համով գինիի փոխուած էր:

Յիսուս իր առաջին այս հրաշքով ցոյց տուաւ իր աստուածային փառքը, ու իր աշակերտները եւ բոլոր ներկաները հաւատացին իրեն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յիսուս կրնար փոքր տարիքէն անմիջապէս սկսիլ իր քարոզախօսութեանց, ուսուցումներուն եւ հրաշագործութիւններուն: Սակայն ան յարգելով իր ժամանակի Օրէնքը, սպասեց վարդապետութեան համար ժողովուրդին կողմէն ընդունուած երեսուն տարիքը: Մինչեւ երեսուն տարեկան, Յիսուս պատրաստուեցաւ մարմնապէս եւ հոգեպէս, որպէսզի յաջողութեամբ աւարտէր աշխարհը եւ մարդիկը փրկելու երկրաւոր իր առաքելութիւնը:

Յիսուս մկրտուելէ եւ Սատանային փորձութիւններուն յաղթելէ ետք, քարոզութիւններու եւ հրաշագործութիւններու չսկսած՝ իրեն օգնական աշակերտներ ընտրեց:

Որեւէ մտածում, գաղափար կամ աշխատանք յաջողցնելու, նոր գաղափարներ տարածելու եւ ուսուցանելու համար պայման է գետին պատրաստել, աշակերտներ եւ համակիր հետեւորդներ ունենալ: Յիսուսի կեանքին, հրաշքներուն եւ ուսուցումներուն ականատես եւ ականջալուր առաքեաներ ու աշակերտներ՝ եղան վկաները Քրիստոսի յարութեան, համբարձման, եւ սիրոյ Աւետարանին բարի լուրը տարին ու տարածեցին աշխարհի չորս անկիւններուն:

Քրիստոսի կատարած իւրաքանչիւր հրաշք եւ բժշկութիւն, բարոյական դաս մը կը փոխանցէր եւ բարի նպատակ մը կը հետապնդէր: Կանայի հարսանիքին ջուրը գինիի փոխելով, Յիսուս կը յայտարարէր որ մեր կեանքը թերի, տխուր եւ պակասաւոր է առանց Նոր Գինիի, այսինքն՝ Քրիստոսով սկիզբ առած սիրոյ Նոր Կեանքին, որ երջանկութիւն եւ յաւիտենական կեանք կը պարգեւէ:

Քրիստոս կատարելով իր առաջին հրաշքը, աստուածային բնութիւնը եւ զօրութիւնը կը յայտնէր եւ բոլորին կը ծանուցէր թէ ինքն էր *Նոր գինին, Նոր Աւետարանը, յոյսը, բալասանը, ճամբան երջանկութիւնը եւ փրկութիւնը:*

Քրիստոս կը հրաւիրէ մեզի նոր կեանքի եւ ընպելու իր հրամցուցած նոր գինին:

Չարցումներուն պատասխանէ՛:

1.– Յիսուս ինչո՞ւ աշխարհ եկած էր: Որո՞նք փրկուբեան կ'արժանանան:

2.– Յիսուս ե՞րբ եւ ինչո՞ւ աշակերտներ ընտրեց: Ի՞նչ եղաւ առաքեալներուն պարտականութիւնը Յիսուսի համբարձունէն վերջ:

3.– Որո՞նք էին Յիսուսի անմիջական շրջանակը:

4.– Յիսուս ինչպէ՞ս փաստեց որ ինք Աստուած էր:


5.– Ի՞նչ առթիւ եւ ո՞ւր տեղի ունեցաւ Յիսուսի առաջին հրաշքը:

6.– Յիսուսի կատարած իւրաքանչիւր հրաշք ի՞նչ կը հետապնդէր:

7.– Կանայի հարսանիքին ջուրը գինիի փոխելով, Յիսուս ի՞նչ կը ծանուցէր:



Հետևեցէ՛ք ինձի եւ եւ ձեզ մարդու որսորդ պիտի ընեն
(Մատթէոս 4:19)





Երբ ծառաները կարասէն ջուրը հանեցին...
գինիի փոխուած էր:

ՅԻՍՈՒՍ ԿԸ ՀԱՆԴԱՐՏԵՑՆԷՖ ՓՈԹՈՐԻԿԸ

(Ղուկաս 8:22-25)

Օր մը Յիսուս նաև բարձրացաւ իր աշակերտներուն հետ, եւ ըսաւ անոնց. **«Եկէ՛ք, անցնինք ծովակին միւս ափը»:** Ու մեկնեցան:

Մինչ կը նաւարկէին, Յիսուս քնացաւ: Ծովակին վրայ փոթորիկ մը բարձրացաւ եւ հետզհետէ սաստկացաւ. տազնապի մատնուեցան: Աշակերտները մօտեցան Յիսուսի, արթնցուցին զինք ու ըսին. **«Վարդապե՛տ, վարդապե՛տ, տես կը կորսուինք»:**

Արթննալով Յիսուս ոտքի ելաւ. սաստեց հովին ու ջուրերուն. ալիքները հանդարտեցան եւ խաղաղութիւն տիրեց: Ապա ըսաւ իր աշակերտներուն. **«Ո՞ր է ձեր հաւատքը»:** Անոնք վախցան եւ զարմացած, կ'ըսէին իրարու.

«Ո՞վ է արդեօք այս մարդը, որ հովերուն ու ջուրերուն կը հրամայէ եւ կը հնազանդին անոր»:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Աշակերտները փոթորիկի, ալեկոծութեան մատնուելով, սարսափեցան: Վտանգի պահուն մենք եւս, որպէս տկար մարդիկ, կը շփոթինք, կը վախնանք: Մեր անձնական ճիգերով եւ միջոցներով երբեմն անկարող կ'ըլլանք առաջքը առնելու մեր դէմ ցցուող վտանգներու, տազնապներու, դժուարութիւններու կամ

փորձութիւններու:

Պէտքը, կարիքը ունինք քաջ նաւավարի, ազատարար փրկիչի, մեզ փրկելու, ազատելու: Որպէսզի վերահաստատէ կորսուած մեր հոգեկան թէ ֆիզիքական խաղաղութիւնը, եւ մեզի բարեյուսոյ նաւահանգիստը առաջնորդէ:

Ոչ միայն մենք, այլեւ՝ համայն աշխարհի, ազգեր, ժողովուրդներ ու պետութիւններ պէտք ունին ճշմարիտ նաւավարին՝ Քրիստոսի, որ աշխարհի կորսուած խաղաղութիւնը, անդորրութիւնը վերահաստատէ:

Առաքեալներու անօգուտ ճիգերը ալիքներու դէմ պայքարելու, կը մնան ապարդիւն, ընդհակառակը՝ նաւը կը սկսի ջուրով լեցուիլ: Առաքեալները կը ստիպուին իրենցմէ քիչ անդին, նաւուն անկիւնը քնացող Յիսուսը արթնցնելու, եւ աղաչելու. **«Տէ՛ր, ազատէ՛ մեզ, ահա կը կորսուինք»:**

Յիսուս, արթննալով անոնց ըսաւ. **«Ինչո՞ւ այդքան կը վախնաք, թերահաւատներ՛»:** Յետոյ ոտքի ելաւ, սաստեց հովերը եւ լիճը, եւ կատարեալ հանդարտութիւն տիրեց:

Մարդոց սպառնացող վտանգները երկու են.

ա.— Մարմնին կամ ֆիզիքականին սպառնացող վտանգներ (հիւանդութիւն, արկած, փորձանք, եւլն.):

բ.— Զոգիին սպառնացող վտանգներ: Մեր առօրեայ կեանքի ընթացքին, ենթակայ ու յաճախ պաշարուած ենք մեղքի ու չարութեան առաջնորդող փորձութիւններով, մոլութիւններով որոնք, մեզ կը պարպեն բարոյական, հոգեւոր արժէքներէ ու պատճառ կ'ըլլան, որ կորսնցնենք մեր հոգեկան խաղաղութիւնը եւ Դատաստանի օրը, դատապարտուինք դժոխքի կրակին:

Զոգիին սպառնացող վտանգները աւելի ծանր են մարմնին սպառնացող վտանգներէն:


Զոգիին սպառնացող վտանգներէն խուսափելու համար պէտք է հեռանանք մեղքի ու չարութեան առաջնորդող մթնոլորտէ, ճանքաներէ, մարդոցմէ, չար ընկերակցութիւններէն, խօսակցութիւններէն, երեւոյթներէ ու սովորութիւններէն:


Հարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Օր մը երբ կը նաւարկէին, Յիսուս ի՞նչ ըրաւ նաւուն մէջ:
- 2.– Ի՞նչ պատահեցաւ, երբ կը նաւարկէին:
- 3.– Աշակերտները ինչո՞ւ արթնցուցին Յիսուսը:
- 4.– Յիսուս արթննալով ի՞նչ ըրաւ:
- 5.– Փոթորիկը հանդարտեցնելէ եւ ծովը խաղաղացնելէ ետք, Յիսուս ի՞նչ ըսաւ առաքեալներուն:
- 6.– Ինչո՞ւ ազգեր, ժողովուրդներ ու պետութիւններ պէտք ունին ճշմարիտ նաւավար Յիսուսի:
- 7.– Մարդոց սպառնացող վտանգները քանի՞ են, թուէ՛:
- 8.– Որո՞նք են մարմնին սպառնացող վտանգները:
- 9.– Ինչո՞ւ հոգիին սպառնացող վտանգները ակելի ծանր են մարմնին սպառնացող վտանգներէն:
- 10.– Հոգիին սպառնացող վտանգներէն խուսափելու համար ի՞նչ պէտք է ընել:
- 11.– Պէ՞տք է աղօթել, որ յաղթենք փորձութիւններուն:



*«Վարդապե՛տ, վարդապե՛տ,
տես կը կորսուի՞նք»:*





Արթնալով Յիսուս ոտքի ելաւ. սաստեց հովին ու ջուրերուն. ալիքները հանդարտեցան եւ խաղաղութիւն տիրեց:

ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆԻԻՆ ՅԱՐՈՒԹԻԻՆԸ

(Ղուկաս 7:11-17)

Յիսուս իր աշակերտները ընտրել էտք, սկսաւ գիւղէ-գիւղ, քաղաքէ քաղաք շրջիլ, խօսիլ եւ քարոզել ժողովուրդին: Յիսուս ուր ալ երթար, կ'ուզէր ժողովուրդին բացատրել, թէ Աստուած ինչ կ'ուզէ մեզմէ, եւ ինչպէ՛ս կ'ուզէ, որ մենք ապրինք: Որպէսզի մարդիկ հաւատան իր խօսքերուն, Յիսուս զանազան առիթներով, հրաշքներ ալ կատարեց, իր աստուածային զօրութիւնը ցոյց տալու եւ մարդոց օգնելու համար:



Օր մը երբ իր աշակերտներուն հետ Նային քաղաքը կ'երթար, քաղաքի մուտքին տեսաւ յուղարկաւորներ, որոնք կը հետեւէին դագաղի մը: Յիսուս իմացաւ որ այրի կնոջ մը մէկ հատիկ զաւակը մեռած էր ու կը տանէին զայն թաղելու: Յիսուս մօտեցաւ եւ տեսնելով անյոյս կերպով լացող որդեկորոյս մայրը՝ մեղքցաւ անոր ու ըսաւ. «Մի՛ լար»:

Երբ բոլորը զարմացած Յիսուսի կը նայէին, մեր Տէրը հրամայեց իրենց ուսերէն վար դնել դագաղը եւ մօտենալով դագաղին

բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ պատանի, քեզի կ'ըսեմ, արթնցի՛ր»:

Մեռած պատանին, անմիջապէս աչքերը բացաւ ու նստեցաւ դազադին մէջ: Յիսուս բռնեց անոր ձեռքէն ու յանձնեց զայն իր մօր: Բոլոր ներկաները վախով ու հիացած զարմանքով նայեցան Յիսուսի: Ապա ուրախութեան աղաղակներով փառք տուին Աստուծոյ եւ իրարու ըսին. «Աստուած Յիսուսի անձին մէջ աշխարհ եկած է փրկելու համար ժողովուրդը»:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Աստուածաշնչական հրաշքները կատարուած չեն ցուցադրութեան, ցուցամոլութեան կամ համբաւ շահելու համար, այլ Աստուծոյ անունը փառաւորելու: Իսկ Յիսուսի կատարած ամէն մէկ հրաշք, ունէր դաստիարակչական հոգեւոր բնոյթ: Յիսուս հրաշք եւ բժշկութիւն կատարելով կ'ուզէր բարոյական դաս մը սորվեցնել եւ մարդոց հաւատքը զօրացնել:

Հրաշք կը կոչուին այն դէպքերը, որոնք չեն բացատրուիր մեզի ծանօթ բնութեան եւ մարդկային օրէնքներով: Հրաշքները մարդկային կարողութիւններէ վեր ըլլալով՝ Աստուծոյ միջամտութեամբ կը կատարուին: Աստուած որ ստեղծած է բնութիւնն ու բնութեան գաղտնիքները, յաճախ մեզի անծանօթ օրէնքներով եւ սկզբունքներով կրնայ իր կամքին ենթարկել, իրեն հնազանդեցնել բնութիւնն ու երկնային ու երկրաւոր ամէն օրէնք: Օրինակ, մեռեալ պատանին պիտի չարթննար, եթէ Յիսուս չվերակենդանացնէր:

Աստուած ինչպէս անցեալին, ներկայիս ալ կը հրաշագործէ հաստատելու համար իր ամենագօրութիւնը եւ անտեսանելի հոգեւոր իրականութիւններու ճշմարտութիւնը: Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնները բնականոն, խաղաղ եւ առանց աղէտներու եւ պատուհասներու կ'ըլլան, երբ յարգենք բնութեան, երկնի թէ երկրի ընդերքին Իր հաստատած բնական ու բարոյական օրէնքները:

Աստուծոյ անեզր ու անսահման գիտութեան քով մեր գիտութիւնը որքան ալ յառաջդիմութիւններ արձանագրէ, ոչինչով կը հաւասարի:

Եթէ կ'ուզենք որ Աստուած մեր կեանքին մէջ հրաշքներ կատարէ, պէտք է հետեւինք Յիսուսի ուսուցումներուն, կեանքին եւ օրինակին:

Յիսուս միշտ մեզի հետ է, եւ կը լսէ իրեն օգնութեան կանչողները: Պէտք է իրեն դիմել ո՛չ թէ նեղութիւններու ժամանակ միայն, այլ միշտ:

Ան խոստացաւ բոլոր իրեն հաւատացողներուն, յաւիտենական կեանք տալ:

Հարցումներուն պատասխանէ՛:

1.– Յիսուս իր աշակերտները ընտրելէ ետք ժողովուրդին ի՞նչ կ'ուզէր բացատրել եւ սորվեցնել:

2.– Ո՞ր քաղաքը կ'երթար Յիսուս, երբ յուղարկաւորներու հանդիպեցաւ:

3.– Ո՞վ էր մեռնողը: Յիսուս մօտենալով ի՞նչ ըսաւ մեռնողին:

4.– Երբ մեռած պատանին աչքերը բացաւ ու կենդանացաւ, ներկաները Աստուծոյ փառք տալով ի՞նչ ըսին:

5.– Ի՞նչ էր Յիսուսի կատարած հրաշքներուն նպատակը:

6.– Ի՞նչ է հրաշքը:

7.– Ինչո՞ւ Աստուած հրաշք կը կատարէ:

8.– Երկիր մեր մոլորակը եւ մեր կեանքը ինչպէ՞ս կարելի կ'ըլլան խաղաղ ու գերծ պահել աղէտներէն:

9.– Աստուծոյ անեզր ու անսահման գիտութեան քով մեր գիտութիւնը կը հաւասարի՞:

10.– Եթէ կ'ուզենք որ Աստուած մեր կեանքին մէջ հրաշքներ կատարէ, ի՞նչ պէտք է ընել:

11.– Ե՞րբ պէտք է Աստուծոյ օգնութեան դիմել:

12.– Յիսուս իրեն հաւատացողներուն ի՞նչ խոստացաւ:



Յիսուս երբ այրի կնոջ մէկ հատիկ մեռած գաւակին յարութիւն տուաւ, մայրը ուրախութեան աղաղակներով, գոհութիւն եւ փառք տուաւ Աստուծոյ:


ԽՈՒԼ ԵՒ ՀԱՄՐ ՄԱՐԴՈՒՆ ԵՒ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԿՆՈՋ ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Մարկոս 7:31-37, Ղուկաս 13:10-17)

Օր մը Յիսուս, երբ կը շրջէր Գալիլիոյ լիճին եզերքը, իրեն կը բերեն խուլ եւ համր մարդ մը, եւ կը խնդրեն որ իր ձեռքը անոր վրայ դնէ ու բժշկէ:

Յիսուս իր մատները անոր ականջներուն մէջ դրաւ եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, աղօթեց եւ ըսաւ. «Եփփաթա՛, որ կը նշանակէ՝ ‘Բացուէ՛’»:

Նոյն վայրկեանին անոր ականջները բացուեցան, եւ լեզուն բացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ:



Իսկ Շաբաթ օր մը, Յիսուս երբ ժողովարանին մէջ կ'ուսուցանէր, հոն տեսաւ կին մը, որ տասներու թը տարիէ ի վեր հիւանդ էր՝ չար ոգիէ բռնուած ըլլալով, եւ այս պատճառով՝ մէջքը ծռած կը քալէր եւ բնաւ չէր կրնար շտկուիլ: Յիսուս խղճալով կնոջ ըսաւ. «Ո՛վ կին, հիւանդութենէդ բժշկուած ես»:

Յետոյ Յիսուս ձեռքերը անոր վրայ դրաւ, եւ կինը անմիջապէս բժշկուեցաւ եւ

սկսաւ գԱստուած փառաւորել: Ժողովրդապետը բարկացաւ, որովհետեւ Յիսուս Շաբաթ օրով կատարեց բժշկութիւնը, եւ ժողովուրդին դառնալով ըսաւ. «Շաբթուան մէջ վեց օր կարելի է աշխատիլ, ուստի այդ օրերուն եկէք եւ բժշկուեցէք եւ ո՛չ թէ Շաբաթ օր»:

Յիսուս անոր պատասխանեց. «Կեղծաւորներ, ձեզմէ իւրաքանչիւրը Շաբաթ օրով իր եզը կամ էջը ախոռէն չի՞ քակեր եւ տանելով ջուր չի՞ տար անոր: Իսկ այս կինը, Սատանային կողմէ տասնըութը տարիէ ի վեր գերուած, չէ՞ր արժեր որ Շաբաթ օրով ազատէի»:

Այս խօսքին վրայ անոնք որոնք կը հակառակէին Յիսուսի՝ ամչցան, մինչ ամբողջ ժողովուրդը կ'ուրախանար Յիսուսի կատարած բոլոր հրաշագործութիւններուն համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Երկու տարբեր անձերու, երկու անջատ հրաշքներ կատարեց Յիսուս, եւ ցոյց տուաւ թէ ինք կարողութիւնը ունի մարդկային ֆիզիքական թերութիւնները եւ հիւանդութիւնները բուժել:

Յիսուս կատարած իր այս երկու հրաշքներով, ուզեց անոնց հաւատքը զօրացնել ու նաեւ դաս մը տալ, թէ երբ իրեն դիմենք, իր օգնութիւնը խնդրենք, ինք միշտ պարաստ է լսելու եւ կատարելու մեր խնդրանքը, եթէ հաւատքով եւ անկեղծութեամբ իրեն վստահինք, իր ձեռքերուն յանձնուինք:

Խուլ եւ համր մարդը, կորսնցուցած ըլլալով լսողութիւնը եւ խօսելու կարողութիւնը՝ զրկուած մըն էր եւ իր շրջապատին հետ չէր կրնար բնական կերպով հաղորդակցիլ: Ան մեկուսացուած դժբախտ մըն էր: Յիսուս անոր ականջի խուլութիւնը եւ լեզուին համրութիւնը բուժելով, առիթը եւ կարողութիւնը տուաւ որ ան իր երախտագիտութիւնը յայտնէ եւ բարձրաձայն Աստուած փառաւորէ: Աստուած մեծ պարգեւ եւ շնորհք ըրած է, երբ մեզի առողջ եւ

կատարեալ ստեղծած է: Պէտք է միշտ երախտապարտ ըլլանք Աստուծոյ, մեզի տուած կեանքին, շնորհքներուն, առողջութեան եւ կարողութիւններուն համար: Մեր մարմնին հոգ եւ խնամք տանինք: Մեզի տրուած կեանքը, առողջութիւնը եւ շնորհքները ծառայեցնենք Աստուծոյ փառքին եւ այլոց բարիք գործելու:

ՁԱստուած պաշտելու եւ բարիք գործելու համար պէտք չէ յատուկ օր կամ օրէնք սահմանել: Բոլոր օրերուն ալ կարելի է Աստուծոյ աղօթել եւ բարիք գործել: Այնպէս ինչպէս Աստուած ամէն օր արելը աշխարհի վրայ կը ծագեցնէ ու մենք միշտ իր բարիքները կը վայելենք, այնպէս ալ մենք երբ հնարաւորութիւնը եւ ժամանակը ունինք բարիք գործելու, օգնելու կամ օգտակար ըլլալու, պէտք չէ խտրութիւն դնենք օրերու եւ միջոցներու մէջ :

Չարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Ինչո՞ւ համար Յիսուսի ներկայացուցին խուլ եւ համր մարդը:
- 2.– Յիսուս ինչպէ՞ս բժշկեց:
- 3.– Շաբաթ օրով երբ Յիսուս կ'ուսուցանէր ժողովարանին մէջ, որո՞ւ հանդիպեցաւ:
- 4.– Յիսուս ի՞նչ ըսելով բժշկեց հիւանդ կինը:
- 5.– Ինչո՞ւ ժողովրդապետը բարկացաւ:
- 6.– Յիսուս ի՞նչ պատասխանեց ժողովրդապետին:
- 7.– Ինչո՞ւ կարելի է բոլոր օրերուն ալ բարիք գործել:



Յիսուս իր մատները անոր ականջներուն մէջ դրաւ եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, աղօթեց եւ ըսաւ. «Եփփաթա՛, որ կը նշանակէ՝ 'Բացուէ՛'»:






«Ով կին, հիւանդութենէդ բժշկուած ես»:

*Յետոյ Յիսուս ձեռքերը անոր վրայ դրաւ, եւ կինը
անմիջապէս բժշկուեցաւ եւ սկսաւ զԱստուած փառաւորել:*

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻՆ

(Ղուկաս 10:25-37)

Յիսուս ժողովուրդին իր խօսքերը, աստուածային ճշմարտութիւնները եւ ուսուցումները հասկնալի եւ հետաքրքրական ընելու նպատակաւ, յաճախ օրինակներով եւ առակներով կը խօսէր: Առակը ճշմարտութիւն մը եւ խրատ մը ուղղակի ըսելու փոխարէն, պատկերաւոր լեզուով փոքրիկ պատմութիւն մըն է, ժողովուրդի առօրեայ կեանքէն առնուած: Այդ պատմութիւններու մէջ մասնակից կրնան ըլլալ ոչ միայն մարդիկ իրենց առօրեայ աշխատանքներով, այլ երբեմն առակներու մաս կրնան կազմել նաեւ բնութիւնը եւ կենդանիներ:



Յիսուսի առակները մեզի բարոյական դաս մը կը սորվեցնեն: Առակներու միջոցաւ, մենք Աստուծոյ կամքը եւ օրէնքները կը ճանչնանք: Առակները իրենց դաստիարակիչ բնոյթով, մեր հաւատքը կը զօրացնեն եւ մեզի կ'առաջնորդեն աստուածապաշտութեան:

Ահաւասիկ անոնցմէ մէկը.-

Օր մը Յիսուս երբ կը քարոզէր, երիտասարդ մը մօտեցաւ եւ ուզեց գիտնալ, թէ ի՞նչ պէտք է ընէ, որպէսզի արժանի ըլլայ երկնքի արքայութեան: Յիսուս երիտասարդին կը հարցնէ, թէ Ս. Գիրքին մէջ Աստուած այդ մասին ի՞նչ պատուիրած է: Երիտասարդը որ սորված էր Աստուծոյ Տասնաբանեայ պատուիրանները կը պատասխանէ.

- Պէտք է սիրեմ Տէր Աստուածս ամբողջ հոգիով եւ սրտով,

ինչպէս նաեւ ընկերս իմ անձիս պէս:

- Քու պատասխանդ շիտակ է, ըսաւ Յիսուս, Գործադրէ՛ ըսածդ եւ պիտի ապրիս:

Ապա երիտասարդը ինքզինք արդարացնելու համար կ'ըսէ.

- Բայց ո՞վ է իմ ընկերս, որուն պէտք է սիրեմ:

Յիսուս փոխանակ ուղղակի պատասխանելու, անոր կը պատմէ Բարի Սամարացիին առակը:

Մարդ մը, կ'ըսէ Յիսուս, Երուսաղէմէն Երիքով կ'երթար: Ճամբան ամայի մէկ վայրի մէջ, աւազակներ անոր վրայ յարձակեցան: Մեծեցին, կողոպտեցին, եւ կիսամահ ձգելով փախան: Այնպէս պատահեցաւ որ այդ ճամբայէն անցաւ հրեայ քահանայ մը, որ տեսաւ վիրաւորը, բայց ճամբուն միւս կողմէն անցաւ ու գնաց: Քիչ ետք նոյն ճամբայէն կ'անցնէր օրէնքի ուսուցիչ մը, ան ալ երբ տեսաւ արիւնյուլայ վիրաւոր մարդը, ճամբուն միւս կողմէն անտարբեր անցաւ գնաց: Վերջապէս Սամարացի մը, որ օտարական մըն էր եւ բոլորէն ճանչցուած էր իբրեւ անհաւատ չար մարդ, անցաւ այնտեղէն: Երբ տեսաւ վիրաւորին ծանր վիճակը, մեղքացաւ եւ մօտեցաւ անոր, իջաւ իր ձիէն ու վիրաւորին վէրքերը գինիով լուաց եւ ձէթ դնելով փաթթեց. ապա դրաւ իր ձիուն վրայ եւ տարաւ պանդոկ մը, որպէսզի հոն խնամեն զայն ու հոգ տանին: Սամարացին երբ պանդոկէն դուրս կ'ելլէր, պանդոկապետին դրամ տուաւ եւ ըսաւ. «Հոգ տար վիրաւորին, եւ եթէ յաւելեալ ծախս ըլլայ, վերադարձիս կը վճարեմ»:

Առակը պատմելէ ետք Յիսուս կը դառնայ երիտասարդին եւ իր շուրջ գտնուող մարդոց ու կը հարցնէ.


«Երեք այդ մարդոցմէ ո՞վ էր վիրաւորին ընկերը: Բարի ճանչցուող կամ յարգուած մարդի՞կը, որոնք անտարբեր եղան եւ վիրաւորին չօգնեցին, թէ մեղաւոր կարծուած ու չար ճանչցուած Սամարացի մարդը, որ բարիք ըրաւ»:

Երիտասարդը կը պատասխանէ.

«Սամարացին»:

Յիսուս կը ժպտի իրեն ու կ'ըսէ.

«Գնա՛, դուն ալ նոյն բանը ըրէ՛»:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բարի Սամարացիին առակով Յիսուս հետեւեալ ճշմարտութիւնները կը սորվեցնէ.

ա.- Երուսաղէմէն Երիքով ճամբորդող մարդը, մարդ արարածն է, որուն կեանքը այս աշխարհի վրայ ճամբորդութիւն մըն է:

բ.- Կեանքի ընթացքին, մարդ արարածը կը հանդիպի զանազան դժուարութիւններու, վտանգներու եւ փորձութիւններու:

գ.- Մարդու կեանքին սպառնացող ամէնէն մեծ վտանգը, սատանային ու չարին կողմէ իր կողոպտուիլը կամ մարդկային արժէքներէն պարպուիլն է:

դ.- Աշխարհէն, մեղքէն ու չարէն վիրաւոր մարդը, կեանքի ճամբու եզերքին արիւնլուայ եւ մահամերձ ինկած՝ անյոյս կը սպասէ օգնութեան:

ե.- Հոս, հրեայ քահանան կը խորհրդանշէ հրեական կրօնը:

զ.- Իսկ Օրէնքի ուսուցիչը կը խորհրդանշէ հրեական կրօնական կամ Մովսիսական օրէնքները:

Աշխարհի չար մեղքերէն փրկուելու, ստացուած վերքերէն բուժուելու եւ Աստուծոյ արքայութեան արժանանալու համար, հրեական կրօնն ու օրէնքները անկարող են փրկել աշխարհէն կողոպտուած եւ մեղքի հարուածներէն մահամերձ մարդը:

է.- Հոս Սամարացին, կը խորհրդանշէ Յիսուսը, որ հրեայ քահանաներու եւ իշխող դասակարգին կողմէ թէւ մերժուեցաւ, սակայն իրմով միայն, մարդիկ փրկուեցան:

ը.- Յիսուս այս առակը պատմելով, կ'ուզէր նաեւ ազգայնամուլ եւ ինքնահաւան հրեաներուն ցոյց տալ, իրենց մաշած եւ հինցած կրօնին եւ մտայնութեան փճացած ըլլալը: Որովհետեւ բարիք գործելու եւ կամ մէկու մը օգնելու համար պայման չեն ազգային, ցեղային, կրօնական տարբերութիւնները կամ ընկերային պայմանները:

թ.- Քրիստոս այս առակով մեզի կ'ուսուցանէ մարդասիրութեան հիման վրայ անխտրական ոգիով, բարեգործութիւն կատա-

րելու համամարդկային պարտականութիւնը, նման Աստուծոյ, որ իր արեւը կը ծագեցնէ բարիին ու չարին վրայ հաւասարապէս:

Վերջապէս այս առակով Յիսուս, սիրոյ եւ փրկութեան իր Նոր Աւետարանին լոյսը կը տարածէ հրեական մթազնած կրօնական կեղծ բարեպաշտական հաւատալիքներուն եւ Մովսիսական օրէնքներուն վրայ, որոնք այլեւս անկարող էին մեղքերու թողութիւն եւ փրկութիւն պարգեւելու:

Հարցումներուն պատասխանէ՛:

1.– Ինչո՞ւ Յիսուս առակներով կը խօսէր:

2.– Ի՞նչ է առակը:

3.– Որո՞նք մասնակից կրնան ըլլալ առակներու պատմութիւններու մէջ:

4.– Յիսուս իր պատմած առակներու միջոցաւ ի՞նչ կ'ուզէր սորվեցնել:

5.– Պատմէ՛ բարի Սամարացիին առակը:

6.– Ընկերասիրութիւնը լաւ բան է: Իրաւ ընկերասիրութիւնը ե՞րբ յայտնի կ'ըլլայ:

7.– Երբ այս առակին այլաբանական իմաստը ուզենք ներկայացնել, Յիսուսի պատմած Երուսաղէմէն Երիքով ճամբորդող մարդը ո՞վ է:

8.– Իր կեանքի ճամբորդութեան ընթացքին, որո՞նք են մարդուն սպառնացող վտանգները:

9.– Հրեայ քահանան հոս, որո՞ւ խորհրդանիշ է:

10.– Օրէնքի ուսուցիչը ի՞նչ կը խորհրդանշէ:

11.– Սամարացին որո՞ւ խորհրդանիշ է:


12.– Աշխարհի չար մեղքերէն փրկուելու, ստացուած վերքերէն բուժուելու եւ արքայութեան արժասնանալու համար, հրեական կրօնն ու օրէնքները կրնա՞ն փրկել մարդը:

13.– Ո՞վ կրնայ մեր վերքերը լուալ, բուժել եւ մեզ փրկել:

14.– Քրիստոս այս առակով մեզի ի՞նչ կ'ուսուցանէ:



*Սամարացի մը, որ օտարական մըն էր եւ բոլորէն ճանչցուած
էր իբրեւ անհաւատ չար մարդ, անցաւ այնտեղէն:
Երբ տեսաւ վիրաւորին ծանր վիճակը, մեղքացաւ.*



*Եւ մօտեցաւ անոր, իջաւ իր ձիէն ու վիրաւորին վերքերը
զինիով լուաց եւ ձէթ զնելով փաթթեց.*



*ապա դրաւ իր ձիուն վրայ եւ տարաւ պանդոկ մը, որպէսզի հոն խնամեն զայն
ու հոգ տանին:*

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՒՄՆ ԱՌԱԿԸ

(Ղուկաս 15: 11-32)


Յիսուս իր շուրջ հաւաքուած ժողովուրդին ուրիշ առակ մըն ալ պատմեց, ցոյց տալու համար Հայր Աստուծոյ գթառատ ողորմութիւնը եւ ներողամտութիւնը իրմէ հեռացած մեղաւորներու նկատմամբ, որոնք կ'անդրադառնան իրենց սխալներուն եւ կը գղջան:

Հարուստ մարդ մը, ըսաւ Յիսուս, երկու զաւակներ ունէր: Օր մը փոքր որդին ըսաւ իր հօրը.

- Հա՛յր, տո՛ւր ինձի քու հարստութենէդ ինձի ինկած բաժինը:

Հայրը շատ խրատեց որ ան չհեռանայ իր քովէն: Բայց փոքր զաւակը մտիկ չըրաւ: Ան պնդեց որ կ'ուզէ տունէն հեռանալ, կեանք եւ աշխարհ տեսնել: Հայրը ստիպուեցաւ իր ժառանգութիւնը բաժնել երկու զաւակներուն միջեւ: Քանի մը օրեր ետք, կրտսեր որդին հաւաքելով իր ինչքերն ու դրամը, տունէն հեռացաւ: Գնաց հեռու երկիր մը, հոն երիտասարդ ընկերներ գտաւ եւ չար կեանք մը ապրելով, իր ունեցած ամբողջ դրամը վատնեց անոնց հետ եւ օր մըն ալ տեսաւ որ իր քով ոչինչ մնացած է: Ընկերներն ալ երբ տեսան իր աղքատ վիճակը, լքեցին զինք ու հեռացան:

Այդ օրերուն, սաստիկ սով տիրեց այդ երկրին մէջ: Ամէն տեղ անգործութիւն էր: Խեղճ վիճակի մատնուած անառակ որդին, շատ մարդոց դիմեց որ գործ մը գտնէ աշխատելու համար: Վերջապէս հարուստ ազարակապան մը իր քով ծառայ առաւ զինք, որպէսզի իր խոզերը արածէ: Օրեր կ'ըլլային, որ հաց չէր գտներ եւ ստիպուած խոզերուն կերակուրներէն կ'առնէր եւ կ'ուտէր:



Օր մը երբ խոզերը կ'արածէր, յիշեց իրենց տունը, իր բարի հայրը եւ եղբայրը: Յիշեց, թէ իրենց ծառաները բոլորն ալ հանգիստ կ'ապրէին հոն եւ աւելի շատ բան ունէին ուտելու: Մինչդեռ ինք՝ ուրիշ մարդու մօտ գրեթէ անօթի կը մեռնէր: Զղջաց իր բոլոր ըրածներուն համար, շատ լացաւ եւ միտքը փոխելով որոշեց երթալ հօրը քով եւ ներողութիւն խնդրել իր անհնազանդութեան եւ գործած յանցանքին համար: Բայց ի՞նչ երեսով հօրը ներկայանար եւ ի՞նչ ըսէր: Ի վերջոյ ըսելիքը մտքին մէջ որոշելով, ինքնզինքին ըսաւ. — Պիտի ելլեմ ու երթամ հօրս քով եւ ըսեմ անոր. «Հա՛յր, ներէ՛ ինծի. ես մեղք գործեցի թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ քեզի հանդէպ: Արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ընդունէ՛ զիս քու ծառաներէդ մէկունն պէս»:

Անառակ որդին ճամբայ ելաւ դէպի իրենց տունը: Հայրը որ միշտ աչքերը ճամբուն կը սպասէր իր որդիին, երբ հեռուէն փոշիներու մէջ նշմարեց իր որդին պատուտած հագուստներ հագած, վազեց դիմաւորելու, գրկեց զայն ու վզին փաթթուեցաւ եւ երկա՛ր համբուրեց: Անառակ որդին լալով եւ անակնկալի եկած հագիւ կրցաւ ըսել. «Հա՛յր, ներէ՛ ինծի. ես մեղք գործեցի թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ քեզի հանդէպ: Արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ընդունէ՛ զիս քու ծառաներէդ մէկունն պէս»:

Բարի հայրը անմիջապէս ներեց իր որդիին: Բռնեց տղուն ձեռքէն եւ տուն տարաւ: Ծառաները կանչեց եւ հրամայեց անոնց.

«Լուացէ՛ք եւ մաքրեցէ՛ք. լաւագոյն հագուստը հանեցէ՛ք եւ հագցուցէ՛ք որդիիս: Մորթեցէ՛ք գիրուկ եզր, ուտենք եւ զուարճանանք, որովհետեւ այս զաւակս մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ»:

Ծառաները գացին եւ իրենց տիրոջ հրամանը կատարեցին: Անմիջապէս մորթեցին գիրուկ եզ մը եւ սկսան ուրախանալ:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յիսուս յաճախ իր ուսուցումներուն ընթացքին, մարդուն եւ Աստուծոյ յարաբերութիւնը կը նմանցնէ հօր եւ որդիի միջեւ եղած յարաբերութեան:

Այդ յարաբերութիւնը մարդկային կեանքէ առնուած առակի մը պատկերաւոր օրինակով, Յիսուս մեզի կ'ուսուցանէ աստուածային ներող անհուն սիրոյն մասին, որ միշտ պատրաստ է ներելու, *«զղջալով տուն վերադարձող»* բոլոր մեղաւորներուն:

Անառակ որդիին առակով Յիսուս ցոյց կու տայ.

ա.- Ինքնահաւան, եսասէր եւ հաճոյասէր մարդը, երբ Աստուծոյ իրեն շնորհած ժառանգը, հարստութիւնը եւ զանազան պարգեւները առնելով կը հեռանայ, ենթադրելով եւ մտածելով որ Աստուծմէ հեռու պիտի երջանկանայ:

բ.- Աստուծմէ անջատուելով եւ հեռանալով երբ այդ ժառանգ-հարստութիւնը անձնասիրութեամբ ու աննպատակ մարդ կը վատնէ հաճոյքի եւ մեղքի ճամբաներուն վրայ, կը մնայ առանձին ու անօգնական:

գ.- Աստուծմէ որքան մարդ հեռանայ, կը թաղուի մեղքի տիղմին մէջ: Իր մէջ Աստուծոյ պատկերը կորսնցուցած եւ մարդկային շնորհքներէն պարպուած՝ մարդ կենդանիներուն կը հաւասարի:

դ.- Սակայն երբ անդրադառնայ, զղջայ ու որոշէ դառնալ չար ճամբաներէն, Աստուած որ միշտ մեղաւորին դարձին կը սպասէ եւ պատրաստ է ներելու, վերստին որդեգրելու եւ վերահաստատելու ինկածը՝ ընդառաջ կ'ելլէ, կը դիմաւորէ մեղաւորը, կը գրկէ, կը համբուրէ եւ կը ներէ անոր:

Հայր Աստուած իր հրեշտակներուն հետ կ'ուրախանայ բոլոր այն մեղաւորներուն համար, որոնք զղջալով կ'ապաշխարեն:

Աստուծոյ սէրը տառապող եւ յուսացող սէր է: Աստուած մեծ համբերութեամբ կը սպասէ, որ իրմէ հեռացած, մեղքի մէջ կորսուած մարդիկ զղջան, ապաշխարեն ու իրեն վերադառնան:

Քրիստոս աշխարհ եկաւ, կորսուածը փնտռելու, գտնելու եւ Հօր Աստուծոյ առաջնորդելու:

Հարցումներուն պատասխանէ՛:

1.— Ի՞նչ ուզեց հարուստ մարդուն փոքր զաւակը:

2.— Ինչո՞ւ հայրը ստիպուեցաւ իր փոքր զաւակին տալ անոր ժառանգութեան բաժինը:

3.— Անառակ որդին ո՞ւր գնաց եւ ինչպիսի՞ կեանք մը ապրեցաւ:

4.— Երբ դրամը վերջացաւ եւ ընկերներն ալ հեռացան, անառակ որդին ի՞նչ ստիպուեցաւ ընել: Ո՞ւր գործ գտաւ եւ աշխատեցաւ:

5.— Օր մը երբ խոզերը կ'արածէր, ի՞նչ յիշեց: Ինչո՞ւ զղջաց եւ ի՞նչ որոշեց:

6.— Անառակ որդին երբ իրենց տան մօտեցաւ եւ հայրը տեսաւ, լալով ի՞նչ ըսաւ:



7.— Հայրը բարի՞ հայր էր: Ներե՞ց իր որդիին: Հայրը ծառաներուն ի՞նչ հրամայեց:

8.— Անառակ որդիին առակը պատմելով Յիսուս մեզի ի՞նչ կ'ուսուցանէ:

9.— Հայր Աստուած երկինքի մէջ ե՞րբ եւ ինչո՞ւ իր հրեշտակներուն հետ կ'ուրախանայ:



Օրեր կ'ըլլային, որ հաց չէր գտներ
եւ ստիպուած խոզերուն կերակուրներէն
կ'առնէր եւ կ'ուտէր:




*«Հա՛յր, ներէ՛ ինձի. ես մեղք գործեցի թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ քեզի հանդէպ:
Արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ընդունէ՛ զիս քու ծառաներէդ մէկուն պէս»»:*



ՅԻՍՈՒՍԻ ԱՍՏՈՒԱԾ ՈՒԹԻՒՆԸ

(Մարկոս 14:55-65, Մատթէոս 9:1-8, Ղուկաս 17:12-19,
Մատթէոս 14:25-31, Ղուկաս 8:41-56)

Հայր Աստուած իր ստեղծած մարդը սիրեց, հակառակ անոր անհնազանդութեան եւ իր դէմ մեղանշելուն: Երբ առաջին մարդը Ադամ, իր ազատ կամքով չարը ընտրեց եւ Աստուծոյ դէմ մեղանշեց, Աստուած Ադամին մահուան դատապարտեց: Հետեւաբար, Ադամին յաջորդող մարդոց բոլոր սերունդները ժառանգեցին ադամական անհնազանդութեան մեղքը եւ մահուան դատապարտուեցան: Աստուծմէ հեռացած մարդ արարածը իր մեղքերէն սրբելու եւ անոր հոգին դժոխքի կրակի դատապարտութենէն ազատելու համար, Աստուած իր Միածին Որդին Յիսուսը աշխարհ դրկեց: Աստուած որ Հոգի է, մարդ արարածը փրկելու համար, մարդկային մարմին առնելով մարդացաւ Յիսուսի անձին մէջ: Աստուած կրնար հրեշտակ կամ այլ արարած ըլլալ: Սակայն մարդացաւ, մեզի պէս մարդ եղաւ, որպէսզի մեր մէջ ու մեր հետ ապրի, հրաշագործէ եւ Աստուծոյ մասին ճշմարտութիւնը սորվեցնէ եւ մեր հոգիները փրկէ: Աստուածորդի Յիսուս կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ ըլլալով, կոչուեցաւ Քրիստոս, որ կը նշանակէ Փրկիչ:



1.- ՅԻՍՈՒՍ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ, ԹԷ ԻՆՔ ԱՍՏՈՒԱԾ Է

Հին Ուխտի մարգարէներ, Դաւիթ թագաւոր, Յիսուսի ծնունդէն

դարեր առաջ, իրենց գրութիւններով եւ պատգամներով Աստուծոյ կատարած խոստումը ժողովուրդին փոխանցեցին: Աստուած խոստացած էր աշխարհ ղրկել Փրկիչ մը: Գարրիէլ Հրեշտակապետ Ս. Կոյս Մարիամի աւետեց թէ իրմէ ծնելիք մանուկը, աշխարհի փրկիչը պիտի ըլլայ, իսկ Յիսուսի ծննդեան ժամանակ երկնքի հրեշտակներ վկայեցին ու յայտարարեցին Յիսուսի աստուածութեան եւ առաքելութեան մասին: Յիսուսի մանկութեան, պատանեկութեան թէ մկրտութեան ընթացքին, Աստուած երկինքէն վկայեց, թէ Միածին Որդի Յիսուսը, սպասուած Մեսիան եւ աշխարհի Փրկիչն է:

Յիսուս երկրաւոր իր առաքելութեան ընթացքին յայտարարեց, թէ ինք Աստուած է: Յիսուս ո՛չ միայն պարզ մարգարէ մըն էր, գոր Աստուած աշխարհ ղրկեց, որ յանդիմանէ անուղղաները, զգուշացնէ մարդիկը ապագայի պատահելիքներէն, մխիթարէ նեղութեան մէջ գտնուողները եւ մեղաւորները զղջումի առաջնորդէ, այլ Աստուած էր եւ հաւասար իր Հօրը: Յիսուս ո՛չ միայն լաւ քարոզիչ մը կամ թէ բացառիկ կարողութիւններով օժտուած իմաստուն ուսուցիչ մըն էր, որ մարդոց բարոյական դասեր տար, այլ Աստուած էր իր երկնաւոր Հօր նման:

Յիսուս շատ անգամներ իր աստուածութեան մասին ինք վկայեց աշակերտներուն, ժողովուրդին եւ նոյնիսկ իր դատաւորներուն առջեւ:

2.— ՅԻՍՈՒՍ ՓԱՍՏԵՑ, ԹԷ ԻՆՔ ԱՍՏՈՒԱԾ Է


Յիսուս միայն չյայտարարեց իր Աստուած ըլլալը. Ան նաեւ փաստեց իր աստուածութիւնը բազմաթիւ հրաշքներ գործելով: Ահալասիկ այդ հրաշքներէն գլխաւորները.

ա.- Զանազան Հրաշքներ:

• **Չուրը գինիի վերածեց:** Գալիլիոյ Կանա քաղաքի հարսանիքին, երբ գինին պակսեցաւ, Յիսուս վեց կարասներու մէջ ջուր դնել տուաւ եւ աղօթելով ջուրը գինիի փոխեց (Յովհաննէս 2:2-11):

• **Հացերը բազմացուց:** Քանի մը հացերով հազարաւորներ կերակրեց (Մատթէոս 14:15-21):

• Հրաշալի ձկնորսութիւնը: Յիսուսի աշակերտները ամբողջ գիշերը աշխատած էին բայց չէին յաջողած ձուկ բռնել: Յիսուսի հրամանով երբ անոնք ուռկանը կրկին ջուր ձգեցին, յանկարծ ուռկանը այնքան շատ ձուկերով լեցուեցաւ, որ աշակերտները ստիպուեցան ուրիշ ձկնորսներու օգնութիւնը խնդրել (Ղուկաս 5:1-11):



բ.- Բնութեան Հրաշքներ:

• Ծովը հանդարտեցուց: Երբ կը նաւարկէին, յանկարծ ծովը սաստիկ փոթորկեցաւ: Յիսուս հրամայեց որ փոթորիկը խաղաղի եւ այլեւո՞՞ծ ծովը հանդարտեցաւ (Մատթէոս 8:23-27):

• Ծովուն վրայէն քայեց: Գիշեր մը երբ իր աշակերտները կը ճամբորդէին Գալիլիոյ ծովուն վրայ, տեսան Յիսուսը որ ջուրերուն վրայէն քայելով դէպի իրենց կու գար (Մատթէոս 14:25-33):

• Զուկին բերանէն դրամ գտնուիր: Օր մը Յիսուս, երբ իր աշակերտներով Կափառնայում կը գտնուէր, տաճարին պաշտօնեաները եկան եւ Յիսուսէն տուրք պահանջեցին: Յիսուսի թելադրութեամբ Պետրոս ծով գնաց եւ իր որսացած առաջին ձուկի բերանէն արծաթ դրամ մը գտնելով, վճարեց պահանջուած տուրքը, թէ՛ Յիսուսի եւ թէ՛ իրեն համար (Մատթէոս 17:23-26):

գ.- Բժշկութիւններ:

• Դեւեր հանեց: Հիւանդ մարդոց մարմիններէն դեւեր հանեց զանոնք բժշկելու ատեն: Դեւերն անգամ կը խոստովանէին որ Յիսուս Աստուծոյ Որդին էր (Մարկոս 1:23-28):

• Ազնուականի մը որդին բժշկեց: Կափառնայումի մէջ, Հերովդէս թագաւորի պալատականներէն ազնուական մը, Յիսուսի մօտ եկաւ եւ խնդրեց որ իր հիւանդ որդին բժշկէ: Յիսուս առանց ազնուականին

տունը երթալու, ըսաւ անոր. «Գնա՛, քու որդիդ առողջացած է»: Ազնուականը երբ տուն դարձաւ, տեսաւ որ իր տղան առողջացած է: Այս հրաշքը պատճառ եղաւ որ ազնուականը իր ընտանիքով հաւատայ Յիսուսի (Յովհաննէս 4:46-54):

- Կափառնայումի անդամալոյծին բժշկութիւնը: Յիսուս տան մը մէջ կը գտնուէր, երբ չորս հոգիներ ուզեցին իրենց անդամալոյծ ընկերը Յիսուսի մօտ բերել: Սակայն բազմութեան պատճառաւ, երբ չկրցան դռնէն ներս մտնել, տան առաստաղը քակեցին եւ անդամալոյծը մահիճով վար իջեցուցին: Յիսուս տեսնելով անոնց հաւատքը բժշկեց անդամալոյծը, թողութիւն տալով նաեւ անոր մեղքերուն: Անդամալոյծը բժշկուած իր մահիճը առաւ եւ ուրախութեամբ տուն վերադարձաւ (Մարկոս 2:1-12):

- Ի ծնէ կոյրին բժշկութիւնը: Երուսաղէմի մէջ երբ Յիսուս կոյրին հանդիպեցաւ, գետնի հողը առաւ, ցեխ շինեց ու կոյրին աչքերուն դրաւ եւ ըսաւ որ երթայ եւ աչքերը լուայ Սելովամի աւազանին մէջ: Կոյրը երբ գնաց եւ լուացուեցաւ, անոր աչքերը բացուեցան եւ ան կը տեսնէր (Յովհաննէս 9:1-6):

Յիսուս բազմաթիւ այլ բժշկութիւններ կատարեց, որոնց մասին աւետարանները կը պատմեն, ինչպէս Տեռատես կնոջ որ Յիսուսի հագուստին դպնալով առողջացաւ կամ տասը բորոտներուն, խուլ համրին, երկու կոյրերուն, Բեթհեզդայի անդամալոյծին բժշկութիւնները:

դ.- Յարութեան Հրաշքներ:

- Յիսուս յարութիւն տուաւ Նայինի պատանիին, որ իր մօրը միակ գաւակն էր (Ղուկաս 7:11-17):

- Յիսուս Յայրոսի տասներկու տարեկան մեռած աղջկան յարութիւն տուաւ (Մատթէոս 9:23-26):

- Բեթսայիթացի Ղազարոսին, որ չորս օրերէ մեռած ու թաղուած էր, Յիսուս գերեզմանէն կանչելով, անոր կեանք տուաւ (Յովհաննէս 11:17-44):

Յիսուս ինք իսկ յարուժիւն առաւ մեռնելէն երեք օր վերջ, ինչ որ իր աստուածութիւնը փաստող մեծագոյն հրաշքն է:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուս աշխարհ եկաւ մարդ արարածը իր մեղքերէն սրբելու եւ աշխարհը վերանորոգելու: Հակառակ Յիսուսի կատարած բազմաթիւ հրաշքներուն, քիչեր միայն հաւատացին Անոր աստուածութեան: Անոնք որոնք իրենց մեղքերը խոստովանելով հաւատացին Յիսուսի, Աստուծոյ ընտրեալ եւ սիրելի որդիներ կոչուեցան: Յարուցեալ Յիսուսը, Փրկիչ եւ Տէր ընդունողներ՝ փրկուեցան եւ արժանացան երկինքի արքայութեան:

Հարցումներուն պատասխանէ՛:

1.— Աստուած ինչո՞ւ առաջին մարդ Ադամը, մահուան դատապարտեց:

2.— Մեղաւոր եւ Աստուծմէ հեռացած ու մեռնելու դատապարտուած մարդու հոգին դժոխքի կրակէն ազատելու համար Աստուած ի՞նչ ըրաւ:

3.— Աստուած մարդը փրկելու համար, կրնար հրեշտակ կամ այլ արարած ըլլալ եւ աշխարհ գալ, ինչո՞ւ մեզի պէս մարդ եղաւ:

4.— Աստուածորդի Յիսուս ինչո՞ւ Քրիստոս կոչուեցաւ: Քրիստոս ի՞նչ կը նշանակէ:

5.— Հին Ուխտի մարգարէներ Յիսուսի ծնունդէն դարեր առաջ ժողովուրդին ի՞նչ պատգամեցին:

6.— Յիսուսի մանկութեան, պատանեկութեան թէ մկրտութեան ընթացքին, Աստուած երկինքէն ի՞նչ վկայեց:

7.— Յիսուս ինչպէ՞ս փաստեց իր աստուածութիւնը:

8.– Թուէ՛ Յիսուսի կատարած զանազան հրաշքները եւ խօսէ՛ անոնցմէ՛ մէկուն մասին:

9.– Թուէ՛ Յիսուսի կատարած բնութեան հրաշքները եւ ներկայացու՛ր անոնցմէ՛ մէկը:

10.– Թուէ՛ Յիսուսի կատարած բժշկութիւնները եւ պատմէ՛ անոնցմէ՛ մէկը:

11.– Թուէ՛ Յիսուսի կատարած յարութեան հրաշքները:

12.– Ո՞ր մէկն է Քրիստոսի աստուածութիւնը փաստող մեծագոյն հրաշքը:










ԶՈՀԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Մատթէոս 27:1-2,15-26, Ղուկաս 23:46, Յովհաննէս 19:1-20)

Յիսուսի հակառակորդները ձերբակալեցին զԻնք եւ ատեան տարին դատելու: Քահանաներ, Սաղուկեցիներ, Փարիսեցիներ եւ Դպիրներ կը ջանային սուտ ամբաստանութիւններով եւ սուտ վկաներով Յիսուսը մահուան դատապարտել: Սակայն անոնց կատարած սուտ վկայութիւնները իրարու չէին համապատասխանէր: Անոնք Յիսուսի վրայ մահուան արժանի ոչ մէկ յանցանք կրցան գտնել:



Ի վերջոյ քահանայապետը ատեան գալով Յիսուսի հարցուց. *«Դո՞ւն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին»:* Յիսուս պատասխանեց ու ըսաւ անոր. *«Այո՛ ես եմ: Պիտի տեսնէք Մարդու Որդին՝ ամենազօր Աստուծոյ աջ կողմը նստած եւ պիտի գայ երկինքի ամպերուն մէջէն»:*

Քահանայապետը այս լսելով, մահուան վճիռ արձակելու որպէս նշան՝ պատուեց իր հագուստը եւ ըսաւ. *«Մեզի այլեւս ի՞նչ պէտք են վկաներ: Ահա բոլորդ իր բերանէն լսեցիք հայհոյութիւնը»:* Ըստ հրեաներու Օրէնքին, Յիսուսի տուած պատասխանը, Աստուծոյ դէմ հայհոյութիւն էր ու մահուան արժանի յանցանք, որովհետեւ Յիսուս ըսած էր, որ ինք Աստուծոյ հաւասար Աստուած է: Եւ ամէնքը դատապարտեցին Յիսուսը եւ ըսին. *«Մահապարտ է»:*

Հրեաներ որպէսզի իրենց առած մահուան վճիռը գործադրեն, Յիսուսը տարին Յոյն կառավարիչին Պիղատոսի մօտ: Պիղատոս հարցաքննեց Յիսուսը, իմանալու որ Ան որեւէ մէկ սպանութիւն, գողութիւն կամ մահուան արժանի ոճիր գործած էր, եւ տեսաւ որ Ան անմեղ

է: Սակայն հրեաներ պնդեցին որ Ան խռովարար է եւ ժողովուրդը իր ուսուցումներով կը մոլորեցնէ: Պիղատոս հրեաները գոհացնելու եւ Յիսուսը ազատելու նպատակաւ, հրամայեց իր գինւորներուն որ ծեծեն Յիսուսը եւ ապա ազատ արձակեն: Զինուորները ծեծելէ ետք Յիսուսը, Անոր գլխուն փուշէ պսակ դրին ու սկսան ծաղրել ու վրան խնդալ: Յիսուս լո՛ւռ տարաւ այս բոլոր չարչարանքները:




Իսկ հրեաներ տակաւին դժգոհ, կը պահանջէին Յիսուսի խաչելութիւնը: Պիղատոս վերջին փորձ մըն ալ ըրաւ Յիսուսը ազատելու:

Սովորութիւն էր որ ամէն Զատիկի տօնին, կառավարիչը մահուան դատապարտուած բանտարկեալ մը ազատ արձակէր, նայած թէ ժողովուրդը որո՞ւն կ'ուզէր: Պիղատոս երբ հրեաներուն հարցուց թէ որո՞ւ ազատ արձակուիլը

կ'ուզէին, անոնք բարձրաձայն աղաղակեցին. «Յեսու Բարաբբան ազատ արձակէ»: Եւ Բարաբբան ոճրագործ աւագակ մըն էր:

Հրեաներ, Յիսուսի տուին հսկայ խաչ մը եւ յոյն գինուորներու առաջնորդութեամբ, երկու այլ աւագակներու հետ տարին Գողգոթա, հոն ուր մահապարտները կը խաչուէին:

Յիսուս խաչին վրայ գրեթէ երեք ժամ մնաց: Անոր գամուած ձեռքերէն եւ ոտքերէն արիւնը դուրս հոսեցաւ: Երբ Յիսուս գիտցաւ որ իր մահը մօտ է, ըսաւ. «Օտարաւ եմ»: Հոն լեղի քացախով լեցուն աման մը կար. գինուորներէն մէկը,



սպուհնզը թաթխեց լեղի քացախին մէջ եւ եղէգի մը ծայրը դնելով, Յիսուսի բերանին մօտեցուց: Երբ Յիսուս լեղիով խառն քացախը խմեց, բարձր ձայնով աղաղակեց. «Հա՛յր, ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ հոգիս»: Եւ գլուխը խոնարհեցնելով, հոգին աւանդեց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1.- ՄԱՐԴԱԿՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԵՐԸ

Ադամ եւ Եւա երջանիկ էին Դրախտին մէջ: Անոնք ազատութիւնը եւ կարելիութիւնը ունէին, միշտ Աստուծոյ ներկայութեան մէջ ըլլալու եւ Աստուծոյ օրհնութիւնները վայելելու: Սակայն անոնք անհամբեր էին, ուզեցին ամէն ինչ ունենալ եւ անմիջապէս ամէն ինչ գիտնալ: Խորամանկ Սատանան այս գիտնալով համոզեց, որ անհնազանդ ըլլան Աստուծոյ, եւ Անոր տուած պատուիրանը չգործադրեն: Անոնք խաբուեցան ու գործեցին իրենց առաջին մեղքը: Աստուած զայրացաւ իրենցմէ եւ անոնց ու անոնց սերունդներուն առջեւ փակեց երկինքի դրախտի դռները:

Մարդիկ շատցան, անոնց մեղքերն ալ իրենց հետ շատցան: Անոնք անհոգ շարունակեցին հայիոյութիւն եւ սպանութիւն ընել, ստել, գողնալ, չարիք գործել եւ աննկարագիր ըլլալ: Անհաւատ եւ Աստուծմէ հեռացած, Չարին եւ Սատանային ենթակայ մեղաւոր մարդկութիւնը, դատապարտուեցաւ դժոխքի յաւիտենական կրակին:

2.- ԱՍՏՈՒԱԾ ԳԹԱՑ ՄԱՅՈՒԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ՄԵՂԱՒՈՐ ՄԱՐԴՈՑ

Յակառակ Աստուծմէ հեռացած եւ մեղաւոր մարդոց, որոնք արժանի էին դժոխքի կրակին, Աստուած գթաց եւ յաւիտենական կորուստէ փրկելու համար մարդիկը՝ ղրկեց իր միածին Որդին, մեր Տէր Յիսուս Քրիստոսը: Ան երկինքէն իջնելով քարայրի մը անշուք մսուրին մէջ ծնաւ: Աղքատիկ կեանք մը ապրեցաւ: Բարի եւ հրաշագործ Վարդապետը, երկրաւոր կեանքին վերջաւորութեան սար-

սափելի չարչարանքներու ենթարկուեցաւ: Համբերութեամբ կրեց փուշէ պսակը, խարազանի հարուածները, զինուորներուն ծաղրանքն ու հրեաներուն ապերախտութիւնը: Վերջապէս մեր Տէրը իր անհուն սէրը ցոյց տալու համար եւ մեղաւոր մարդիկը Սատանայի ծառայութենէն ազատելու եւ դժոխքի դատապարտութենէն փրկելու համար, Ինք անոնց փոխարէն խաչ բարձրացաւ եւ խաչին վրայ թափեց իր սուրբ արիւնին վերջին կաթիլը: Յիսուս Քրիստոսի մահով, մեղքի մէջ մեռած մարդկութիւնը, Անոր սուրբ արիւնով սրբուեցաւ, արդարացաւ եւ փրկուեցաւ:

3.– ՅԻՍՈՒՍ ԱՅՍ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ ԻՆՉՈ՞Ւ ԿՐԵՑ


Յիսուս այս բոլոր չարչարանքները կրեց, որպէսզի

ա.– Իր չարչարանքներով քաւէ Աստուծոյ հանդէպ մարդոց գործած մեղքերը եւ վերադարձնէ անհնազանդութեան պատճառաւ մարդոց կորսնցուցած Աստուծոյ շնորհքները:

բ.– Իր կեանքով մեզի ցոյց տայ կատարեալ սէրը: Ան մեռաւ խաչին վրայ, ցոյց տալու համար, թէ մեռնելու գնով պէտք է սիրել զԱստուած:


գ.– Մեզի բարի օրինակ ըլլայ, կեանքի դժուարութիւնները հաւատքով եւ համբերութեամբ կրելու, եւ Աստուծոյ օրհնեալ կամքին կատարելապէս հնազանդելու:

դ.– Մեզի համար Յիսուս կրեց բազմաթիւ չարչարանքներ: Մենք ալ մեզի խոստացուած արքայութեան արժանանալու համար, Իրեն համար պէտք է զրկանք յանձն առնենք:



Հարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Որո՞նք էին Յիսուսի հակառակորդները:
- 2.– Յիսուսի հակառակորդները կ'ուզէի՞ն սպաննել զԻնք:
- 3.– Յիսուսի հակառակորդները զԻնք դատապարտելու համար, ի՞նչ միջոցներու դիմեցին: Ընտրե՛ պատասխաններէն մէկը:
 - ա. Կաշառեցին դատաւորը:
 - բ. Յիսուսէն հրաշք պահանջեցին:
 - գ. սուտ վկաներ բերին:
 - դ. աշակերտները դատարան կանչեցին:
- 4.– Անոնց կատարած անբաստանութիւնները եւ վկայութիւնները իրարու կը համապատասխանէի՞ն:
- 5.– Քահանայապետը ի՞նչ հարցուց: Յիսուս ի՞նչ պատասխանեց:
- 6.– Հրեաներ իրենց առած մահուան վճիռը գործադրելու համար, Յիսուսը որո՞ւ մօտ տարին:
- 7.– Հակառակ Յիսուսի անմեղ ըլլալուն, երբ հրեաներ պահանջեցին Յիսուսի մահը, Պիղատոս Յիսուսը ազատելու համար վերջին փորձ ի՞նչ ըրաւ:
- 8.– Յիսուս ո՞ւր խաչուեցաւ: Ի՞նչ եղան Յիսուսի վերջին բառերը:
- 9.– Ինչո՞ւ Աստուած մարդիկը դժոխքի կրակին դատապարտեց:
- 10.– Աստուած ինչո՞ւ իր Միածին Որդի Յիսուսը աշխարհ ղրկեց: Յիսուս ինչպէ՞ս ապրեցաւ աշխարհի վրայ եւ ինչպիսի՞ մահ ունեցաւ:
- 11.– Յիսուս ինչո՞ւ չարչարուեցաւ եւ խաչուեցաւ:





Հրեաներ որպէսզի իրենց առած մահուան վճիռը գործադրեն, Յիսուսը տարին Պիղատոսի մօտ: Պիղատոս հրեաները գոհացնելու նպատակաւ, հրամայեց իր գինուորներուն որ ծեծեն Յիսուսը: Զինուորները ծեծելէ ետք Յիսուսը, Անոր գլխուն փուշէ պսակ զրին ու սկսան ծաղրել ու վրան խնդալ:



Յիսուսի տուփն հսկայ խաչ մը եւ յոյն զինուորներու առաջնորդութեամբ, երկու այլ աւագակներու հետ տարին Գողգոթա... խաչելու:



**Աստուած իր անհուն սէրը ցոյց տուաւ, երբ յանձն առաւ խաչի
անարգ մահը, մարդիկը իրենց մեղքերէն սրբելու, փրկելու
ղժոխքի կրակէն եւ յաւիտենական կեանք պարգեւելու:**

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

(Ղուկաս 24:50-53, Գործք Առաքելոց 1)

Երբ Յիսուս խաչին վրայ Ուրբաթ օր, իր հոգին ալանդեց, բարի մարդիկ Անոր մարմինը խաչէն իջեցնելով թաղեցին ժայռափոր նոր գերեզմանի մէջ եւ անոր դուռը գոցեցին հսկայ քարով: Հրեաներ գերեզմանին քարէ կափարիչը կնքեցին եւ այնտեղ պահապան զինուորներ դրին, որպէսզի ոեւէ մէկը չկարենայ Յիսուսի մարմինը գերեզմանէն վերցնել:




Միաշարաթի (Կիրակի) գիշերուան ժամուան, մեծ աղմուկով գերեզմանին հսկայ կափարիչը մէկ կողմ գլորեցաւ, գերեզմանը լուսաւորուեցաւ եւ Յիսուս վերակենդանացած՝ յարութիւն առաւ: Պահապան զինուորները այս տեսնելով զարհուրեցան եւ զօրաւոր լոյսի հոսանքէն զարնուած՝ գետին ինկան ու չկրցան իրենց աչքերը բանալ: Երբ ուշքի եկան, անմիջապէս քաղաք գացին ու պատմեցին Յիսուսի յարութիւնը:

Յիսուս յարութիւն առնելէ ետք, նախ երեւցաւ իւղաբեր կիներուն եւ ապա իր աշակերտներուն: Ան քառասուն օրեր մնաց երկրի վրայ եւ յաճախ երեւնալով իր մօրը, աշակերտներուն եւ հետեւորդներուն՝ խրատեց, ուղղութիւն տուաւ եւ պատուիրեց որ իր յարութեան ականատես վկաները ըլլալով, աշխարհի բոլոր ազգերուն քարոզեն Աւետարանը:

Վերջին անգամ Յիսուս իր աշակերտներուն երեւցաւ յարութեանէն քառասուն օր ետք: Անոնց հետ հաց կերաւ, զանոնք օրհնեց եւ առաջնորդեց Երուսաղէմի Ձիթենեաց լեռ: Հոն Յիսուս իր վերջին խրատները տուաւ, ըսաւ թէ Ինք երբ երկինք վերադառնայ, Սուրբ Հոգին պիտի

դրկէ, որպէսզի Անոր զօրութեամբ երթան եւ աշխարհի զանազան երկիրներուն մէջ տարածեն Աւետարանին բարի լուրը, պատմեն իր հրաշքները եւ սորվեցնեն իր խօսքերը: Անոնք որոնք հաւատան՝ զանոնք մկրտեն Հօրը, Որդիին եւ Ս. Հոգիին անունով: Եւ մինչ Յիսուս ձեռքերը վեր բարձրացուցած կ'օրհնէր, աշակերտները տեսան որ Յիսուսի ոտքերը կ'անջատուին երկրէն եւ կամաց-կամաց երկինք կը համբառնար, կը բարձրանար:



Աշակերտները երբ այսպէս ապշած կը դիտէին Յիսուսի երկինք համբառնալը, ահա ամպերու մէջէն երկու հրեշտակներ կը յայտնուին անոնց ու կ'ըսեն. «*Ինչո՞ւ կեցեր երկինք կը դիտէք: Այս Յիսուսը որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս Անոր երկինք երթալը տեսաք*»:

Աշակերտները լսելով հրեշտակներուն բարի լուրը, ուրախացան եւ մխիթարուած վերադարձան Երուսաղէմ: Հոն Մարիամ Աստուածածին, առաքեալներ, Յիսուսի աշակերտներ եւ հաւատացեալներ, միշտ կը հաւաքուէին վերնատան մէջ ու կ'աղօթէին: Առաքեալները մտածեցին Յուդա Իսկարիովտացիին տեղ ուրիշ աշակերտ մը ընտրել որպէսզի իրենց թիւը տասներկու ըլլայ:

Յուդա Յիսուսը մատնելով եւ ապա զղջալով ինքզինք կախած էր: Առաքեալներ, Յիսուսի հետեւորդներէն եւ հաւատացեալներէն ընտրեցին Յովսէփը եւ Մատաթիան: Ապա աղօթեցին եւ վիճակ ձգեցին: Ու վիճակը ելաւ Մատաթիային, որ դասուեցաւ Յիսուսի առաքեալներու կարգին:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1.— Յիսուս մարդիկը փրկելու երկրաւոր Իր առաքելութիւնը աւարտելէ ետք, երկինք համբարձաւ եւ նստաւ Յայր Աստուծոյ աջ կողմը: Ան ինչպէս որ երկինք ելաւ, այնպէս ալ օր մը, ամպերու մէջէն ու բիւրաւոր հրեշտակներով դարձեալ պիտի գայ՝ աշխարհը դատելու համար: Ամէն անոնք որոնք իրենց հաւատքը պահած են, Յիսուսի ապաւինելով աստուածահաճոյ եւ արդար կեանք ապրած են, պիտի վարձատրուին: Իսկ անհաւատներն ու չարութիւն գործողները պիտի պատժուին դժոխքի կրակին մէջ:

2.— Յիսուս թէւ երկինք վերադարձաւ, մեզմէ մարմնապէս բաժնուեցաւ բայց երբեք մեզ չլքեց: Ան միշտ մեզի հետ է: Իր Սուրբ Հոգիին միջոցով ներկայ է եկեղեցւոյ մէջ ու կը գործէ անոր միջոցաւ: Օրինակ, հայր մը երբ քաղաքէն կը բացակայի, միշտ իր ընտանիքին եւ զաւակներուն հետ կ'ըլլայ միտքով եւ հոգիով:

3.— Քրիստոսի հաստատած եւ առաքելներու քարոզութեամբ տարածուած Սուրբ Եկեղեցիին եւ անոր զաւակներուն պարտականութիւնն է հաւատարիմ մնալ Քրիստոսի Աւետարանի ուսուցումներուն, գործադրել պատուիրանները, աղօթել եւ յոյսով սպասել Տիրոջ գալստեան, զԱյն ցնծութեամբ դիմաւորելու համար:

4.— Համբարձման տօնը նաեւ *Վիճակի օր* է: Որովհետեւ այդ օր, հետեւողութեամբ առաքելներուն, հայ-քրիստոնեաներ ու յատկապէս կանայք եւ աղջիկներ բախտաւոր եւ երջանիկ կեանքի մը ակնկալութեամբ, իրենց բախտին *Վիճակ կը ձգեն* եւ օրը կ'անցընեն դաշտագնացութիւններով, մասնաւոր երգերով, պարերով, ուրախութեամբ եւ զուարճալի մթնոլորտի մէջ:



Հարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Ինչո՞ւ հրեաներ, Յիսուսի գերեզմանին քարէ կափարիչը կնքեցին եւ պահակներ դրին:
- 2.– Ի՞նչ պատահեցաւ Միաշաբաթի գիշերուան ժամուն:
- 3.– Յիսուս յարութիւն առնելէ ետք, որո՞նց երեւցաւ եւ քանի՞ օր երկրի վրայ մնաց:
- 4.– Համբարձման օրը Յիսուս ո՞ր տարաւ իր աշակերտները եւ ի՞նչ պատուիրեց:
- 5.– Իր աշակերտները օրհնելու ատեն ի՞նչ պատահեցաւ:
- 6.– Որո՞նք երեւցան աշակերտներուն եւ ի՞նչ ըսին:
- 7.– Աշակերտները ո՞ր վերադարձան:
- 8.– Աշակերտներուն հետ ուրիշ որո՞նք աղօթք կ'ընէին վերնատան մէջ:
- 9.– Ո՞վ ընտրուեցաւ մատնիչ Յուդայի տեղ:
- 10.– Երբ օր մը Յիսուս կրկին աշխարհի վերադառնայ, ի՞նչ պիտի ընէ:
- 11.– Ի՞նչ է Յիսուսի հաստատած եկեղեցւոյ ու անոր հաւատացեալ զաւակներուն պարտականութիւնը:



ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

(Վիճակ)

Համբարձման տօնին կապուած են հին հայկական սովորութիւններ:

Համբարձումէն մէկ օր առաջ, ընդհանրապէս աղջիկներ, դաշտերն ու պարտէզները պտրտելով, կը հաւաքէին գոյնզգոյն ծաղիկներ: Այդ ծաղիկներով կը շինէին խաչաձեւ մեծ փունջ մը, որ *Մաղկամայր* կը կոչուէր: Զայն կը գետեղէին ջուրով լեցուն մեծ տաշտի մը մէջ: Ապա իւրաքանչիւր մասնակից իր սեպհականութիւնը եղող զարդեղէն որեւէ իր մը, ինչպէս՝ մատանի, օղ, ապարանջայ, ծամակալ, գարդակոճակ, վզնոց թէ այլ առարկայ, այդ ջուրին մէջ կը նետէր, ու վարդի տերեւներով կը ծածկէին ջուրին մակերեսը: Ծաղիկներով եւ առարկաներով լեցուն այդ տաշտը կը տանէին եկեղեցի, խորանին ետեւ դնելու:

Յաջորդ օր, պատարագէն ետք, ընտանիքներ դաշտերը պտոյտի կ'երթային: Աղջիկներ իրենց հետ կը տանէին նաեւ խորանին ետին դրուած տաշտը: Ուրախ միջնուրտի մէջ կը խմբուէին ծաղիկներով եւ վարդերով զարդարուն տաշտին շուրջ: Ժողովրդային թէ այլ խանդավառ երգեր երգելէ ետք, փոքրիկ աղջնակի մը երեսը քօղով կը ծածկէին: Երգ մը կամ արտասանութիւն մը ընելու ատեն, փոքրիկը տաշտի ջուրերուն մէջէն կը հանէր ներկաներէն մէկուն պատկանող զարդեղէնը, միաժամանակ իր բախտին կը կարդացուէր նախապէս գրուած, պատրաստուած եւ ծալլուած թղթիկներէն մին, որ ըստ բախտի ամանի մը մէջէն առնուելով կը բացուէր: Իրենց բախտին կարդացուած թղթիկին բովանդակութիւնը ընդհանրապէս սիրոյ, գեղեցկութեան, յաջողութեանց, յոյսերու եւ կեանքի բախտաւորութեանց շուրջ հիւսուած բանաստեղծութիւններ կ'ըլլային՝ կ'ունկնդրուէին մեծ հետաքրքրութեամբ եւ երբեմն ալ անձկութեամբ:

Համբարձման առթիւ կազմակերպուած վիճակահանութեան աւարտին՝ ներկաներու միջեւ ծաղիկները կը բաժնուէին իսկ կեղրոնի գեղեցկահիւս խաչանիչ *Մաղկամայրը* կը նուիրէին եկեղեցւոյ:



Մինչ Յիսուս կ'օրհնէր, տեսան որ Յիսուսի ոտքերը կ'անջատուէին երկրէն եւ կամաց-կամաց երկինք կը բարձրանար



Յիսուս իր վերջին

խրատները եւ օրհնութիւնները տուաւ աշակերտներուն:



«Ինչո՞ւ կեցեր երկինք կը դիտէք: Այս Յիսուսը որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի դայ աշխատէ՝ ինչպէս Անոր երկինք երթալը տեսաք»:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ

(Գործք Առաքելոց 2:1-42)

Յիսուսի երկինք համբար-
ձուձն տասր օր ետք, Պենտե-
կոստէի տօնին, որ հունձքի
տաճար ընծայման նուիրուած
էր, Ս. Կոյս Մարիամ, առաք-
եալներ եւ այլ հաւատացեալ-
ներ վերնատան մէջ հաւաք-
ւած, միասիրտ եւ միախոր-
հուրդ հաւատքով կ'աղօթէին,
սպասելով Ս. Հոգիի գալստեան,
գոր Յիսուս խոստացած էր
ղրկել իրենց: Յանկարծ երկին-
քէն հովի սաստիկ ձայն մը
լսուեցաւ եւ լեցուց ամբողջ
վերնատունը:



Ս. Հոգին կրակէ լեզուներ
ու կերպարանքով երեւցաւ եւ
հանգչեցաւ վերնատան մէջ
աղօթող իւրաքանչիւրի վրայ,
ու բոլորն ալ Ս. Հոգիով
լեցուեցան եւ Անոր զօրութեամբ սկսան զանազան լեզուներ խօսիլ,
համարձակ ու բարձրաձայն զԱստուած փառաւորել:

Պենտեկոստէի տօնին, վերնատան մէջ առաքեալներուն պատահած
այս տարօրինակ լուրը, շուտով տարածուեցաւ Երուսաղէմի մէջ, եւ
ամէն կողմէ մարդիկ հաւաքուեցան վերնատան շուրջ: Պետրոս
առաքեալ առիթը յարմար նկատելով, առաքեալներու հետ ոտքի ելաւ

եւ համարձակութեամբ ներկաներուն պարզեց Աստուծոյ փրկութեան ծրագիրը, զոր Յիսուս Քրիստոսի միջոցաւ իրագործուեցաւ: «Մենք խաչեալ, բայց յարուցեալ եւ փառաւորեալ Տէրը կը քարոզենք, որ երկինք համբառնալով, Հօր Աստուծոյ աջ կողմը բազմեցաւ եւ իր խոստումին համաձայն, Ս. Հոգին դրկեց այսօր, որպէսզի համարձակ վկայենք եւ Աւետարանը աշխարհին քարոզենք»:

Պետրոս առաքեալին քարոզը մեծապէս տպաւորեց եւ ներկաներ առաքեալներուն եւ Պետրոսի դիմելով ըսին.

- Ի՞նչ ընենք:

Առաքեալներ պատասխանեցին.

- Ապաշխարեցէք եւ մկրտուեցէք Յիսուս Քրիստոսի անունով:

Այդ օր շուրջ երեք հազար մարդիկ դարձի եկան եւ Աստուծոյ խօսքը ընդունելով մկրտուեցան: Այնուհետեւ անոնք Ս. Կոյս Մարիամի, առաքեալներուն եւ այլ հաւատացեալներուն հետ կը մասնակցէին հաւաքական աղօթքներուն, հացի բեկանումին (Ս. Պատարագի արարողութիւններուն) եւ բարեսիրական աշխատանքներուն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1.— Վերնատան մէջ Ս. Կոյս Մարիամի եւ առաքեալներու գլխաւորութեամբ հաւաքուած հաւատացեալներու միական, միասիրտ, միախոհ եւ վերացած աղօթքի մթնոլորտը, օրինակ պէտք է ըլլայ մեզի: Մենք ալ ազգովին պէտք է ըլլանք միասիրտ, միական եւ միախոհ, որպէսզի երբ վեհացած ու կեդրոնացեալ աղօթենք՝ ստանանք Աստուծոյ Ս. Հոգին, շնորհքներն ու զօրութիւնը: Աստուծոյ Ս. Հոգիի սուրով միայն կարելի է պայքարիլ մեղքին, չարին եւ խաւարի ուժերուն դէմ: Իր մէջ Ս. Հոգին ունեցողը կ'ապրի սուրբ եւ աստուածահաճոյ կեանք:



2.– Ս. Յոզիմ Ամենասուրբ Երրորդութեան Երրորդ անձնաւորութիւնն է: Առաջինը՝ Յայր Աստուածն է, երկրորդը՝ Յիսուս Քրիստոսն է: Ամենասուրբ Երրորդութեան Երրորդ անձնաւորութիւնը Սուրբ Յոզի կոչուած է, որովհետեւ մարմին չունի, հոգի է: Աստուած Յոզի է: Ան ինքզինք մարդոց յայտնած է որպէս բարի Յայր: Իսկ մարդոց փրկութեան համար Յայր Աստուած մարդացաւ, ինքզինք իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ աշխարհին յայտնեց:

3.– Աստուածաշունչին մէջ Ս. Յոզիին տրուած են հետեւեալ անունները.- *Ճշմարտութեան հոգի, քաջութեան, մխիթարութեան հոգի, սրբութեան աղբիւր*: Ս. Յոզին նման է *աղաւնիի* (Յովհ. 1:32), *կենդանի ջուրի* (Յովհ. 7:38), *ձէթի* (Ա. Սամուէլ 16:13), *հովի* (Յովհ. 3:8), *լուսաւոր ամպի* (Ղուկաս 9:34-35), *կրակի* (Գործք 2:3):

Աստուծոյ Ս. Յոզիին պարգեւած շնորհքի պտուղները հետեւեալներն են.- *սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ազնուութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն / չափաւորութիւն* (Գաղատացիս 5:22-23):

4.– Յիսուս երկինք համբարձաւ իր յարութեան քառասուն-երրորդ օրը: Յամբարձումէն տասը օրեր ետք, Պենտեկոստի տօնին, երբ Աստուածամօր առաջնորդութեամբ վերնատան մէջ առաքեալներ եւ Յիսուսի հետեւորդներ, սրտեռանդն ու հաւատքով կ'աղօթէին՝ Յիսուս իր աշակերտներուն տուած խոստումին համաձայն, Ս. Յոզին ղրկեց կրակէ լեզուներու կերպարանքով, որոնք նստան անոնցմէ իւրաքանչիւրին վրայ, եւ բոլորը Ս. Յոզիով լեցուեցան: Այնուհետեւ աշակերտներ համարձակ վկայեցին Յիսուսի յարութիւնը, Տէր եւ Փրկիչ ըլլալը, ու քաջութեամբ քարոզեցին Աւետարանը: Առաքեալներ նախ քան Ս. Յոզին ստանալը՝ վախկոտ եւ անուս ձկնորսներ էին: Յիսուսի մատնութեան, ձերբակալման եւ խաչելութեան ընթացքին վախցան, լքեցին իրենց Վարդապետը ու հեռացան: Սակայն երբ տեսան յարուցեալ Տէր Յիսուսը եւ ստացան Ս. Յոզին՝ քաջութեամբ, իմաստութեամբ եւ շնորհքներով լեցուեցան եւ մեկնեցան աշխարհի զանազան կողմերը փրկութեան Աւետարանը քարոզելու:

Հարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Պենտեկոստէի տօնին աշակերտները ո՞ր հաւաքուած էին:
- 2.– Պենտեկոստէի տօնը Յիսուսի յարութեան եւ Անոր երկինք հանքարձման քանի՞ երրորդ օրուան կը զուգադիպէր:
- 3.– Վերնատան մէջ ուրիշ որո՞նք ներկայ էին եւ ի՞նչ կ'ընէին:
- 4.– Երբ կ'աղօթէին յանկարծ ի՞նչ պատահեցաւ:
- 5.– Սուրբ Հոգին ի՞նչ բանի նման իջաւ անոնց վրայ:
- 6.– Պետրոս առաքեալ երուսաղէմի բնակիչներուն ի՞նչ խօսեցաւ:
- 7.– Շատեր Պետրոսի քարոզը մտիկ ընելէ ետք, ի՞նչ ըսին առաքեալներուն:
- 8.– Պետրոս առաքեալ ի՞նչ ըսաւ անոնց:
- 9.– Այդ օր քանի՞ հազար մարդիկ Քրիստոսի անունով մկրտուեցան:
- 10.– Թուէ՛ Ամենասուրբ Երրորդութեան անձնաւորութիւններու անունները:
- 11.– Թուէ՛ Աստուածաշունչին մէջ Ս. Հոգիին տրուած անունները:
- 12.– Որո՞նք են Աստուծոյ Ս. Հոգիին պարգեւած շնորհքի պտուղները:
- 13.– Անուս, տգէտ եւ վախկոտ աշակերտներուն ի՞նչն էր որ կերպարանափոխեց եւ մահուան գնով գացին Աւետարանը քարոզելու:





Վերնատան մէջ երբ հաւատքով կ'աղօթէին, յանկարծ երկինքէն հովի սաստիկ ձայն մը լսուեցաւ եւ լեցուց ամբողջ վերնատունը:

Ս. Հոգին կրակէ լեզուներու կերպարանքով երեւցաւ եւ հանգչեցաւ վերնատան մէջ աղօթող իւրաքանչիւրին վրայ, ու բոլորն ալ Ս. Հոգիով լեցուեցան:



ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԻՍՈՒՍ ԲԱՐԻ ՀՈՎԻԻԸ

Յիսուս կ'ըսէ. «Ե՛ս եմ իրաւ հովիւը: Իրաւ հովիւը իր կեանքը կու տայ ոչխարներուն համար. մինչ վարձկանը, որ հովիւ չէ եւ որուն չեն պատկանիր ոչխարները, երբ կը տեսնէ որ գայլը կու գայ՝ կը լքէ ոչխարները ու կը փախչի, ձգելով որ գայլը յափշտակէ եւ ցրուէ ոչխարները, որովհետեւ վարձկանը չի մտահոգուիր ոչխարներուն վիճակով: Ե՛ս եմ իրաւ հովիւը: Կը ճանչնամ ոչխարներս եւ անոնք ալ գիտ կը ճանչնան, այնպէս՝ ինչպէս Հայրը գիտ կը ճանչնայ եւ ես՝ Հայրը: Ես կեանքս կու տամ ոչխարներու համար: Տակաւին ուրիշ ոչխարներ ալ ունիմ, որոնք այս փարախէն (ոչխարներու գոմ, խումբ) դուրս են. պարտաւոր եմ գանոնք եւս ներս բերել: Անոնք ալ ինձի մտիկ պիտի ընեն, եւ պիտի ըլլան մէկ հօտ՝ մէկ հովիւով» (Յովհաննէս 10:11-16):



ԵԿԵՂԵՑԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԸՆՏԱՆԻՔՆ Է

Յիսուս մեր բարի հովիւն է: Ան իր կեանքը կու տայ գայլերէ եւ ամէն տեսակ թշնամիներէն մեզ պաշտպանելու համար: Ով որ Յիսուսի հաւատայ, կը դառնայ անոր ոչխարներէն մէկը: Յիսուս մեզ մեր անուններով կը ճանչնայ:

Քրիստոս բարի Հովիւին հաւատացողներ, մաս կը կազմեն Յիսուսի ընտանիքին, Յիսուսի եկեղեցւոյ: Յիսուս գիտէ իր հաւատացեալները, անոնք կը լսեն, կը ճանչնան իրենց Հովիւին ձայնը, օտարին ետեւէն չեն երթար:

Ուրեմն Յիսուսի հաւատացողներ, առանձին չեն կրնար ապրիլ, այլ կ'ապրին մէկ ընտանիքի մէջ, որ Յիսուսի ընտանիքն է եւ որ կը կոչուի **եկեղեցի**:

Եկեղեցի բառը ունի երկու իմաստ: Առաջինը նիւթական, այսինքն քարեղէն շէնքը կամ կառույցը ուր հաւատացեալներ կը հաւաքուին աղօթելու համար: Երկրորդը հոգեւոր եկեղեցի, այսինքն բոլոր այն հաւատացեալները որոնք նոյն հաւատքը ունին, կը հաւատան Ամենասուրբ Երրորդութեան եւ կ'ապրին համապատասխան քրիստոսահաճոյ կեանք:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Երբ առաջին անգամ Քրիստոսի եկեղեցին կազմուեցաւ, հաւատացեալներու թիւը փոքրաթիւ էր: Բայց հոգեգալուստի օրը եկեղեցւոյ հաւատացեալներու թիւը բարձրացաւ երեք հազարի: Իսկ այսօր, Քրիստոնեաներու թիւը միլիոններ կը հաշուէ: Անտիոքի մէջ էր որ Քրիստոսի հետեւորդներ **քրիստոնեայ** կոչուեցան:

Առաջին դարու քրիստոնեաները կ'ապրէին մէկ ընտանիքի պէս: «Եթէ գործադրէք իմ պատուիրաններս, իմ սիրոյս մէջ մնացած պիտի ըլլաք» (Յովհաննէս 15:10): Քրիստոնեաներ, մեծ սիրով կապուած էին իրարու հետ եւ այդ սէրը հիմնուած էր Քրիստոսի սիրոյն եւ Անոր տուած սիրոյ պատուիրանին վրայ: «Իմ պատուէրս է՝ որ սիրէք իրար, ինչպէս ես ձեզ սիրեցի» (Յովհաննէս 15:12):

Հեթանոսներ կը զարմանային, թէ պարզ հաւատացեալներ եւ առաքեալներ ինչպէ՛ս հաւասարապէս զիրար կը սիրէին, իրարու հետ յարգալից էին եւ իրարու կ'օգնէին:

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՊԵՐԸ

Քրիստոնեաներ իրարու կապուած են իրենց հաւատքով, փոխադարձ սիրով, եկեղեցւոյ օրէնքներուն եւ իշխանութեան հնազանդութեամբ:

Յիսուսի երկինք համբարձումէն ետք, Եկեղեցին եղաւ Քրիստոսի երկրաւոր առաքելութեան շարունակողը երկրի վրայ: Եկեղեցւոյ գլուխը Քրիստոս է: Եկեղեցին Ս. Հոգիի առաջնորդութեամբ կը գործէ, կ'առաջնորդէ իր հաւատացեալները եւ կը ջանայ երկրի վրայ Աստուծոյ Օրէնքները, խաղաղութիւնը, երջանկութիւնը եւ արքայութիւնը հաստատել:


Աստուծոյ Սուրբ Հոգին բոլորս կ'առաջնորդէ դէպի Աստուած, իր միաձին Որդւոյն միջոցաւ, որպէսզի բոլորս, որպէս նոյն եկեղեցւոյ անդամները՝ արժանանանք երկնային ու յաւիտենական կեանքի երջանկութեան:

Յարցումներուն պատասխանէ՛:

- 1.– Ո՞վ կը դառնայ Յիսուսի ոչխարներէն մէկը:
- 2.– Յիսուս ինքզինք ինչո՞ւ բարի հովիւ կը կոչէ:
- 3.– Յիսուս իր ոչխարները անունով կը ճանչնա՞յ:
- 4.– Ի՞նչ կը կոչուի Յիսուսի ընտանիքը:
- 5.– Տո՞ւր եկեղեցի բառին երկու իմաստները:
- 6.– Քրիստոսի հաւատացողներ եւ հետեւորդներ ո՞ւր էր որ քրիստոնեայ կոչուեցան:
- 7.– Ինչպէ՞ս կ'ապրէին առաջին դարու քրիստոնեաները:
- 8.– Քրիստոնեաներ իրարու հետ ի՞նչ կապերով կապուած են:
- 9.– Ո՞վ է եկեղեցւոյ գլուխը եւ հովիւը:
- 10.– Քրիստոսի եկեղեցին երկրի վրայ որո՞ւ առաջնորդութեամբ կը գործէ:
- 11.– Ի՞նչ է Քրիստոսի եկեղեցւոյ պարտականութիւնը երկրի վրայ:
- 12.– Ինչպէ՞ս կրնանք նմանիլ առաջին դարու քրիստոնեաներուն:

*Ե՛ս եմ իրաւ հովիւը: Իրաւ հովիւը
իր կեանքը կու տայ ոչխարներուն
համար:*

*Յիսուս մեր բարի հովիւն է: Ան իր
կեանքը կու տայ գայլերէ եւ ամէն
տեսակ թշնամիներէն մեզ պաշտ-
պանելու համար:*



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԴԱՍ 1	Աշխարհի եւ Մարդուն Ստեղծումը	էջ 3
ԴԱՍ 2	Մարդուն Անհնազանդութիւնը	էջ 7
ԴԱՍ 3	Սողոմ Գոմոր Քաղաքներու Կործանումը	էջ 15
ԴԱՍ 4	Եսաւ ու Յակոբ	էջ 19
ԴԱՍ 5	Յովսէփ Գեղեցիկ	էջ 25
ԴԱՍ 6	Մովսէս Մարգարէ	էջ 33
ԴԱՍ 7	Դաւիթ Թագաւոր	էջ 42
ԴԱՍ 8	Յիսուս Աշխարհի Փրկիչը	էջ 51
Ընթերցում		
	Տեառնընդառաջ	էջ 60
ԴԱՍ 9	Յիսուսի Մկրտութիւնը եւ Փորձութիւնը	էջ 62
ԴԱՍ 10	Յիսուսի կատարած Առաջին Հրաշքը	էջ 72
ԴԱՍ 11	Յիսուս կը Հանդարտեցնէ Փոթորիկը	էջ 78
ԴԱՍ 12	Նայնի Պատանիին Յարութիւնը	էջ 83
ԴԱՍ 13	Խուլ եւ Համր Մարդուն եւ Հաշմանդամ կնոջ Բժշկութիւնները	էջ 87
ԴԱՍ 14	Բարի Սամարացին	էջ 92
ԴԱՍ 15	Անառակ Որդիին Առակը	էջ 99
ԴԱՍ 16	Յիսուսի Աստուածութիւնը	էջ 105
ԴԱՍ 17	Զոհազոհութեան Խորհուրդը	էջ 114
ԴԱՍ 18	Յիսուսի Համբարձումը	էջ 122
Ընթերցում		
	Համբարձում (Վիճակ)	էջ 126
ԴԱՍ 19	Հոգեգալուստ	էջ 129
ԴԱՍ 20	Քրիստոսի Ս. Եկեղեցին	էջ 134